9	06BAKU205	NEW MANAT SLIPS IN THE BACK DOOR AS INFLATION INCREASES AND MANAT BEGINS SLOW APPRECIATION	CONFIDENTIAL	2006-02-10T13:11:00Z	ECON, EFIN, PREL, PGOV, AJ
15	06BAKU219	IMF READOUT ON ECONOMY IN LATE 2005 AND EARLY 2006	CONFIDENTIAL	2006-02-14T13:42:00Z	ECON, EFIN, PREL, PGOV, AJ
53	06BAKU407	MANAGING AZERBAIJAN,S LOOMING ECONOMIC STORM	CONFIDENTIAL	2006-03-15T13:03:00Z	ECON, EFIN, EAID, ETRD, PREL, PGOV, AJ
54	06BAKU411	ECONOMIC DECISION-MAKING AZERBAIJANI STYLE	CONFIDENTIAL	2006-03-16T11:10:00Z	PINR, ECON, PGOV, PREL, AJ
55	06BAKU412	EUR A/S FRIED DISCUSSES ECONOMIC AND FINANCIAL REFORMS WITH AZERBAIJANI ECONOMIC DEVELOPMENT MINISTER	CONFIDENTIAL	2006-03-16T11:57:00Z	ECON, ENRG, EPET, EFIN, PREL, PGOV, AJ

56	06BAKU430	PRESIDENT ALIYEV LOOKS TO THE FUTURE OF AZERBAIJAN	SECRET	2006-03-21T13:09:00Z	PREL, PGOV, PHUM, KDEM, ECON, ENRG, MOPS, AJ
86	06BAKU531	ECONOMIC DEVELOPMENT OF THE EXCLAVE OF NAKHCHIVAN	CONFIDENTIAL	2006-04-06T09:35:00Z	PREL, PGOV, ECON, ETRD, BEXP, KFLU, AJ
87	06BAKU573	AZERBAIJAN: SUCCESSFUL MINISTERIAL-LEVEL MACROECONOMIC BUDGET SEMINAR ENDS WITH HOPE FOR FURTHER REFORMS	CONFIDENTIAL	2006-04-07T08:22:00Z	PGOV, PREL, PHUM, KDEM, ECON, EAID, MARR, AJ
130	06BAKU715	MINISTER OF ECONOMIC DEVELOPMENT SEEKS MORE U.S.	CONFIDENTIAL	2006-05-15T12:20:00Z	PREL, PGOV, ENRG, EPET, ETRD, KDEM, PINR, AJ
136	06BAKU731	PRESIDENTIAL ECONOMIC ADVISOR'S PERSONAL INFLUENCE DIMINISHES	CONFIDENTIAL	2006-05-18T08:38:00Z	ETRD, ECON, EFIN, PREL, PGOV, PINR, AJ
182	06BAKU1076	AMBASSADOR DISCUSSES ECONOMIC ENVIRONMENT WITH IFI's	CONFIDENTIAL	2006-07-21T06:50:00Z	ECON, EFIN, EAID, PREL, AJ
266	06BAKU1476	AZERBAIJAN: DRAFT 2007 BUDGET PROJECTS 42 PERCENT	CONFIDENTIAL	2006-10-11T08:05:00Z	ECON, EFIN, PREL, AJ
297	06BAKU1624	PRESIDENT HIGHLIGHTS ECONOMIC SUCCESSES IN RUN UP TO PRESIDENTIAL ELECTIONS IN 2008	CONFIDENTIAL	2006-11-08T15:32:00Z	ECON, PREL, EAGR, EAID, AJ
347	06BAKU1798	IMF REPRESENTATIVE BRIEFS REVENUE MANAGEMENT GROUP ON MACROECONOMIC TRENDS	CONFIDENTIAL	2006-12-11T06:31:00Z	ECON, EFIN, ETRD, PREL, AJ
349	06BAKU1800	2007 STATE BUDGET FORESEES 60% INCREASE IN GOVERNMENT SPENDING	CONFIDENTIAL	2006-12-11T06:33:00Z	ECON, EFIN, ETRD, AJ, EINV
377	07BAKU39	GOVERNMENT RAISES PRICES ON FUEL AND KEY GOODS AND SERVICES BY MORE THAN 50%	CONFIDENTIAL	2007-01-09T12:35:00Z	ECON, AMGT, EID, EFIN, ETRD, EPET, ENRG, AFIN, AJ
379	07BAKU50	IMPLICATIONS OF UNSC SANCTIONS ON IRAN-AZERBAIJAN	SECRET//NOFORN	2007-01-11T11:59:00Z	PGOV, PINR, PREL, ECON, EINV, ENRG, EPET, IR, AJ
388	07BAKU89	PUBLIC REACTION TO RECENT PRICE INCREASES MUTED DESPITE GOVERNMENT'S FAILURE TO WIN THE PUBLIC RELATIONS BATTLE	CONFIDENTIAL	2007-01-19T05:54:00Z	ECON, AMGT, EAID, EFIN, ETRD, EPET, ENRG, AFIN, AJ
398	07BAKU125	GOAJ APPROVES OPPOSITION MUSAVAT PARTY REQUEST TO PROTEST PRICE HIKES ON JANUARY 28	CONFIDENTIAL	2007-01-25T14:06:00Z	PGOV, PREL, PHUM, KDEM, CASC, ASEC, AJ
399	07BAKU131	GOAJ RAISES SALARIES AND MINIMUM WAGE TO COUNTER EFFECTS OF RECENT PRICE INCREASES	CONFIDENTIAL	2007-01-26T12:32:00Z	ECON, EFIN, PGOV, PREL, EAID, AMGT, AJ
438	07BAKU274	IMF CONSULTATIONS REVEAL GROWING INFLATION AND POSITIVE TRENDS IN GOAJ ECONOMIC DECISION-MAKING	CONFIDENTIAL	2007-03-06T12:38:00Z	ECON, EFIN, EAID, PREL, AJ
508	07BAKU474	AZERBAIJAN INVESTMENT COMPANY STARTS TO PURSUE ITS MISSION	CONFIDENTIAL	2007-04-20T06:32:00Z	PREL, PGOV, ECON, EAGR, EPET, KCOR, AJ
510	07BAKU477	AZERBAIJAN CREATES NEW SPECIAL ECONOMIC ZONES	UNCLASS/FOUO	2007-04-20T10:50:00Z	ECON, EFIN, EAID, ETRD, ENRG, EPET, AJ
521	07BAKU505	INFLATION BEGINNING TO IMPACT AZERBAIJAN'S ECONOMY	CONFIDENTIAL	2007-04-25T04:27:00Z	ECON, EFIN, ENRG, KCOR, AJ
536	07BAKU573	AZERBAIJAN TAKES FIRST STEP TOWARDS IMPROVING BUSINESS ENVIRONMENT	CONFIDENTIAL	2007-05-11T11:06:00Z	ECON, ETRD, EINV, PGOV, AJ
546	07BAKU603	NEARLY USD 1 BILLION BUDGET INCREASE WORRIES IFI's IN AZERBAIJAN	CONFIDENTIAL	2007-05-18T06:04:00Z	ECON, EFIN, EPET, ENRG, PREL, AJ
562	07BAKU683	FINANCE MINISTER DISCUSSES ECONOMIC REFORMS AND PLANS FOR MODERNIZATION	CONFIDENTIAL	2007-06-01T08:23:00Z	ECON, EFIN, PREL, ENRG, AJ
581	07BAKU737	AZERBAIJAN APPROVES SUPPLEMENTAL BUDGET INCREASE OF ALMOST USD 700 MILLION	CONFIDENTIAL	2007-06-12T11:40:00Z	ECON, EFIN, PGOV, AJ
674	07BAKU1068	PRESIDENT ALIYEV REVIEWS THE BILATERAL ECONOMIC RELATIONSHIP AND IRAN	CONFIDENTIAL	2007-08-24T03:45:00Z	ECON, EFIN, ETRD, PGOV,

		WITH EEB A/S SULLIVAN			PREL, KCOR, IR, AJ
688	07BAKU1124	IMF BELIEVES GOAJ UNDERSTANDS RISKS OF EXCESSIVE SPENDING	CONFIDENTIAL	2007-09-12T05:20:00Z	ECON, EFIN, PREL, AJ
699	07BAKU1199	AZERBAIJAN COMMERCIAL UPDATE, SEPTEMBER 2007	UNCLASSIFIED	2007-09-28T11:24:00Z	ECON, EINV, ETRD, ENRG, EFIN, AJ
700	07BAKU1207	2008 BUDGET FORECASTS ANOTHER LARGE INCREASE IN SPENDING	CONFIDENTIAL	2007-10-02T06:45:00Z	ECON, EFIN, EAID, AJ
740	07BAKU1330	PRESIDENT'S STATE OF THE UNION SPEECH: ECONOMIC SUCCESSES, MILITARY BUILDUP, AND CRITICISM OF MONOPOLISTS AND ELITES	CONFIDENTIAL	2007-11-06T10:17:00Z	ECON, PGOV, EAID, PREL, KCOR, EFIN, AJ
802	07BAKU1487	AZERBAIJAN'S 2008 STATE BUDGET EXPENDITURES TOP 10 BILLION MANATS	CONFIDENTIAL	2007-12-14T08:35:00Z	ECON, EFIN, PGOV, EINV, ETRD, AJ
815	07BAKU1518	AZERBAIJAN'S STATE OIL FUND: 2007 PERFORMANCE AND PLANS FOR 2008.	UNCLASSIFIED	2007-12-26T12:21:00Z	ECON, EINV, ETRD, ENRG, EFIN, AJ
818	08BAKU3	AZERBAIJAN'S INCREASINGLY CONFIDENT FOREIGN POLICY	CONFIDENTIAL	2008-01-03T10:18:00Z	PREL, PGOV, PBTS, ENRG, KDEM, AJ
819	08BAKU6	PRESIDENT ALIYEV OUTLINES PLNS FOR STATE FUNDING OF NGOS	CONFIDENTIAL	2008-01-04T09:52:00Z	PGOV, PREL, PHU, KDEM, AJ
834	08BAKU70	RUMORS SWIRL OF MINISTER OF ECONOMIC DEVELOPMENT'S LOOMING DOWNFALL	CONFIDENTIAL	2008-01-28T11:39:00Z	KTDB, ECON, EFIN, EINV, ELAB, ETRD, OPIC, PGOV, AJ
835	08BAKU71	AZERBAIJAN: INVESTMENT CLIMATE STATEMENT 2008	UNCLASSIFIED	2008-01-28T11:39:00Z	ETDR, ECON, WTRO, PINR, PGOV, KCOR, PREL, AJ
837	08BAKU77	AZERBAIJAN'S OPAQUE PROCUREMENT SYSTEM	CONFIDENTIAL	2008-01-30T06:58:00Z	ECON, EINV, ETRD, PGOV, KCOR, AJ
851	08BAKU123	CORRECTED COPY: AZERBAIJAN: INVESTMENT CLIMATE STATEMENT 2008	UNCLASSIFIED	2008-02-12T06:59:00Z	KTDB, ECON, EFIN, EINV, ELAB, ETRD, OPIC, PGOV, AJ
889	08BAKU203	PRESIDENT HIGHLIGHTS ECONOMIC DEVELOPMENT OF THE REGIONS	CONFIDENTIAL	2008-03-06T11:20:00Z	ECON, EFIN, ETRD, PGOV, AJ
929	08BAKU291	UPDATE ON SOFAZ, AZERBAIJAN'S OIL FUND	CONFIDENTIAL	2008-03-28T08:41:00Z	ECON, EFIN, ENRG, PREL, AJ
938	08BAKU322	AZERBAIJAN ECONOMY CONTINUES EXPANSION IN 2007; OUTLOOK FOR 2008 STABLE	CONFIDENTIAL	2008-04-04T10:41:00Z	ECON, EFIN, PREL, ETRD, AJ
939	08BAKU324	AZERBAIJAN COMMERCIAL UPDATE, March 01 - 15, 2008	UNCLASSIFIED	2008-04-04T11:30:00Z	ECON, EINV, ETRD, ENRG, EFIN, AJ
977	08BAKU461	GOVERNMENT "SHARKS" PUSH LARGE AMERICAN INVESTOR TO QUIT AZERBAIJAN	CONFIDENTIAL	2008-05-16T11:59:00Z	ECON, ETRD, EFIN, KCOR, PREL, PGOV, AJ
988	08BAKU496	KOREAN COMPANIES FACE CHALLENGES IN AZERBAIJAN'S	CONFIDENTIAL	2008-05-30T09:43:00Z	ECON, KCOR, EFIN, ETRD, AJ
1008	08BAKU593	AZERBAIJAN: 2008 REPORT ON INVESTMENT DISPUTES AND	UNCLASS/FOUO	2008-06-24T04:01:00Z	ECON, EINV, KIDE, PGOV, AJ
1032	08BAKU667	AZERBAIJAN INCREASES 2008 BUDGET WITH LARGE TRANSFERS FROM STATE OIL FUND	CONFIDENTIAL	2008-07-10T06:27:00Z	ECON, EINV, ETRD, ENRG, EFIN, AJ
1093	08BAKU845	WB TO NAME AZERBAIJAN NUMBER ONE REFORMER WORLDWIDE	CONFIDENTIAL	2008-09-09T11:51:00Z	ECON, ETRD, EINV, EFIN, EAGR, ECIN, AJ
1162	08BAKU1083	MINISTER SHARIFOV DISCUSSES EPC, BUDGET AND ECONOMY	CONFIDENTIAL	2008-11-12T08:53:00Z	ECON, EFIN, EINV, EIND, PGOV, AJ
1163	08BAKU1089	ExIM BANK DIRECTOR VISIT BUILDS CONFIDENCE AND GAINS INFORMAL FINANCING REQUESTS	CONFIDENTIAL	2008-11-13T12:52:00Z	ECON, ETRD, EINV, EFIN, EAGR, ECIN, AJ
1213	09BAKU23	IFT's WEIGH IN ON EFFECT OF GLOBAL FINANCIAL CRISIS IN AZERBAIJAN	CONFIDENTIAL	2009-01-13T13:50:00Z	ECON, EFIN, ETRD, EXIM, EINV,

					AJ
1214	09BAKU25	IFI's COMMENT ON INVESTMENT CLIMATE IN AZERBAIJAN	CONFIDENTIAL	2009-01-14T10:26:00Z	ECON, EFIN, ETRD, EXIM, EINV, AJ
1219	09BAKU34	AZERBAIJAN'S 2009 BUDGET: A SUSTAINABLE POLICY IN AN UNCERTAIN WORLD	CONFIDENTIAL	2009-01-16T08:48:00Z	EAGR, ECIN, ECON, EFIN, EPET, ETRD, EINV, AJ
1278	09BAKU224	AZERBAIJAN'S ECONOMY: TOO GOOD TO BE TRUE?	CONFIDENTIAL	2009-03-19T10:10:00Z	EAGR, ECIN, ECON, EFIN, EPET, ETRD, EINV, AJ
1421	09BAKU708	AZERBAIJAN: ECONOMIC/ COMMERCIAL ROUNDUP	UNCLASS/FOUO	2009-09-04T10:44:00Z	ECON, EINV, EIND, AJ
1472	09BAKU864	AZERBAIJAN: ECONOMIC/ COMMERCIAL ROUNDUP	UNCLASS/FOUO	2009-11-02T11:47:00Z	ECON, EINV, EIND, EAIR, KCOR, TINT, KIPR, AJ, TU, AE,
1538	10BAKU51	AZERBAIJAN - INVESTMENT CLIMATE STATEMENT 2010	UNCLASSIFIED	2010-01-25T13:12:00Z	EINV, EFIN, ETRD, ELAB, KTDB, PGOV, USTR, OPIC, AJ
1539	10BAKU54	AZERBAIJAN: WHO OWNS WHAT? PART 1 - THE FIRST LADY'S FAMILY	SECRET	2010-01-27T13:10:00Z	ECON, EINV, EIND, ETRD, KCOR, PINR, PGOV, AJ
1561	10BAKU127	WHO OWNS WHAT VOL. 2 - THE MINISTER OF EMERGENCY SITUATIONS, BELUGA CAVIAR, AND FRUIT JUICE	SECRET	2010-02-25T05:18:00Z	PGOV, PREL, PHUM, PTER, AJ, AF, PK, IR

GOAJ – Government of Azerbaijan. WB – World Bank. IFI 's – International Financial Institutions. IMF – International monetary fund. ExIm – US Expoert Import Bank

Չ1.4. «Ադրբեջանական դոսյեի» ռազմական (պաշտպանական) ոլորտին առնչվող Wikileaks-յան Խմբաքանակ Ա-ի հաղորդագրությունները

Wikileaks-յան հաղորդագրությունների Խմբաքանակ Ա-ի՝ Բաքվում ԱՄՆ դեսպանության 1569 հաղորդագրություններից ԱՉ ռազմական (պաշտպանական) ոլորտին անմիջականորեն վերաբերում են 44-ը: Վերջիններիս ցանկը բերում ենք Աղյուսակ Չ1.4-ում, ուր դրանք ներկայացված են ըստ Խմբաքանակ Ա-ում իրենց ժամանակագրական թվի, ինդեքսի, գլխագրի, կազմման տարեթվի և գաղտնիության կարգի: Գրքում (հիմնականում Գ. 5-ում) այս հաղորդագրությունները մեջբերվում կամ նշվում են ըստ ժամանակագրական թվի, օրինակ՝ Թիվ 16 կամ ինդեքսի, օրինակ՝ 06 BAKU 234: Բացի այս 44 հաղորդագրություններից, Աղյուսակ Չ1.4-ում բերվում են դրանց հետ առնչվող այլ հաղորդագրություններ, որոնք Բաքվում ԱՄՆ դեսպանության հաղորդագրությունները չեն: Վերջիններս աղյուսակում և գրքում հիշատակվում են միայն իրենց ինդեքսով, օրինակ՝ 09 MOSCOW 1225 (Մոսկվայում ԱՄՆ դեսպանության 2009թ. 1225-րդ հաղորդագրություն):

Աղյուսակ Չ1.4. Ռազմական խնդիրներին առնչվող Բաքվում ԱՄՆ դեսպանության և այլ հարակից Wikileaks-յան Խմբաքանակ Ա-ի հաղորդագրությունները				
Թիվ	Ինդեքս	Բնագրի բովանդակային գլխագիր	Կազմված է	Գաղտնագիր
3	06BAKU157	RUSSIAN DEFENSE MINISTER IVANOV'S VISIT TO TO AZERBAIJAN: HEATING UP THE COURTSHIP?	03.02.2006	CONFIDENTIAL
13	06BAKU217	NEW MINISTER OF EMERGENCY SITUATIONS OUTLINES AMBITIOUS AGENDA; LOOKS FOR ROLE IN PIPELINE SECURITY AND COUNTER-TERRORISM	14.02.2006	CONFIDENTIAL
16	06BAKU234	AZERBAIJANI FM MEETS WITH CONFERENCE OF PRESIDENTS OF MAJOR AMERICAN JEWISH ORGANIZATIONS	15.02.2006	CONFIDENTIAL
44	06BAKU348	AZERBAIJAN'S RESPONSE TO U.S.-PROPOSED AGENDA FOR POL-MIL CONSULTATIONS	03.03.2006	CONFIDENTIAL
47	06BAKU362	PRESIDENT'S DECREE GIVES GREATER POWERS TO NEW MINISTRY OF EMERGENCY SITUATIONS	07.03.2006	CONFIDENTIAL
63	06BAKU452	SCENESETTER FOR MARCH 29 US-AZERBAIJAN Pol MILL consultations	23.03.2006	SECRET/NOFORN
242	06BAKU1406	PRESIDENT ALIYEV REVIEWS DEFENSE ISSUES, REAFFIRMS SUPPORT FOR NEW EMBASSY COMPOUND	26.09.2006	CONFIDENTIAL
274	06BAKU1525	DEFENSE MINISTER ABIYEV RAISES REGIONAL SECURITY	19.10.2006	CONFIDENTIAL
281	06BAKU1540	ISRAEL ENHANCING MILITARY RELATIONSHIP WITH AZERBAIJAN	21.10.2006	SECRET
282	06BAKU1541	ISRAEL ENHANCING MILITARY RELATIONSHIP WITH AZERBAIJAN	21.10.2006	CONFIDENTIAL
296	06BAKU1622	AZERBAIJAN'S NATIONAL SECURITY CONCEPT EXPECTED TO	08.11.2006	CONFIDENTIAL
318	06BAKU1709	ISRAELI READOUT ON MOD GILAD'S VISIT TO AZERBAIJAN	24.11.2006	SECRET
333	06BAKU1753	UPDATE ON AZERBAIJAN'S NATIONAL SECURITY CONCEPT	01.12.2006	CONFIDENTIAL
343	06BAKU1791	DOD DAS MACDOUGALL'S DECEMBER 7 MEETING WITH DEFENSE MINISTER ABIYEV	08.12.2006	CONFIDENTIAL
344	06BAKU1793	DASD MACDOUGALL'S MEETING WITH DEPUTY FOREIGN MINISTER AZIMOV	08.12.2006	CONFIDENTIAL
440	07BAKU280	PRESIDENT ALIEV ASKS FOR MORE SIGNS OF USG SUPPORT	07.03.2007	CONFIDENTIAL
454	07BAKU302	STATE-DOD MOU ON SECURITY - ANNUAL REVIEW OF MOA FOR AZERBAIJAN	13.03.2007	UNCLASSIFIED
473	07BAKU367	AZ INTERESTED IN JOINING INITIATIVE TO TO COMBAT NUCLEAR TERRORISM	03.04.2007	UNCLASSIFIED//FOR OFFICIAL USE ONLY

572	07BAKU718	AZERBAIJANIS SURPRISED BY PUTIN'S OFFER TO SHARE GABALA; INITIAL REACTION POSITIVE	08.06.2007	CONFIDENTIAL
575	07BAKU721	PRESIDENT ALIYEV CONFIRMS SUPPORT FOR THE GABALA RADAR PROPOSAL	08.06.2007	CONFIDENTIAL
576	07BAKU722	MISSILE DEFENSE: BACKGROUNDER ON THE GABALA RADAR STATION	08.06.2007	SECRET
578	07BAKU728	AZERBAIJANI-RUSSIAN COORDINATION ON PUTIN'S GABALA PROPOSAL	11.06.2007	CONFIDENTIAL
582	07BAKU739	PRESIDENT ALIYEV: ON MISSILE DEFENSE, "WE'LL DO WHATEVER YOU PREFER"	13.06.2007	CONFIDENTIAL
586	07BAKU754	FURTHER IRANIAN REACTION TO THE QABALA RADAR	15.06.2007	CONFIDENTIAL
592	07BAKU774	FOREIGN MINISTER MAMMADYAROV ON MISSILE DEFENSE	21.06.2007	CONFIDENTIAL
616	07BAKU841	AZERBAIJANI CONSIDERING CFE MORATORIUM	05.07.2007	SECRET//NOFORN
629	07BAKU903	AZERBAIJAN IN WAIT AND SEE MODE REGARDING RUSSIAN CFE SUSPENSION	18.07.2007	CONFIDENTIAL
760	07BAKU1382	AZERBAIJANI DFM AZIMOV DISCUSSES AZERBAIJAN'S INTERPRETATION OF FUTURE PROSPECTS ON CFE	16.11.2007	CONFIDENTIAL
761	07BAKU1383	AZERBAIJANI DFM AZIMOV SAYS "DON'T FORGET US" ON GABALA	16.11.2007	CONFIDENTIAL
772	07BAKU1407	ACTION REQUEST: REVIEW OF AZERBAIJAN'S MILITARY DOCTRINE	27.11.2007	CONFIDENTIAL//NOFORN
780	07BAKU1430	BRIEFING AZERBAIJAN ON U.S. PROPOSALS ON MD, CFE	30.11.2007	UNCLASSIFIED//FOR OFFICIAL USE ONLY
794	07BAKU1467	DEPUTY FOREIGN MINISTER AZIMOV ON MISSILE DEFENSE AND OTHER SECURITY ISSUES	11.12.2007	CONFIDENTIAL
811	07BAKU1511	AZERBAIJANI DEFENSE MINISTER ABIYEV PROVIDES READOUT ON CIS AND RUSSIAN MEETINGS, GABALA DISCUSSIONS	19.12.2007	CONFIDENTIAL
829	08BAKU44	AZERBAIJAN'S INTENTIONAL AMBIGUITY TOWARD NATO	17.01.2008	CONFIDENTIAL
852	08BAKU126	CORRECTED COPY OF SCENESETTER FOR S/CT FRANK URBANCIC'S VISIT TO BAKU	12.02.2008	CONFIDENTIAL
893	08BAKU211	UPDATE ON U.S. MISSILE DEFENSE TALKS WITH RUSSIA DELIVERED TO AZERBAIJAN	07.03.2008	CONFIDENTIAL
1210	09BAKU20	Azerbaijan's discreet symbiosis with israel	13.01.2009	SECRET//NOFORN
1227	09BAKU73	BAKU UP IN ARMS OVER ALLEGED RUSSIAN WEAPONS TRANSFER	29.01.2009	SECRET//NOFORN
	09MOSCOW313	MFA REJECTS CLAIMS OF ARMS TRANSFERS TO ARMENIA	10.02.2009	CONFIDENTIAL
1270	09BAKU201	AZERBAIJAN-TURKEY: STILL ONE NATION, TWO STATES?	13.03.2009	CONFIDENTIAL
1279	09BAKU226	DEFENSE MINISTER ON GABALA, ARMAVIR, RUSSIA	19.03.2009	SECRET
1307	09BAKU334	AZERBAIJAN: DEFENSE MINISTER ON RUSSIA TENSIONS	22.04.2009	SECRET
1327	09BAKU395	SCENESETTER FOR USEUCOM COMMANDER GENERAL CRADDOCK, MAY 20-21	15.05.2009	UNCLASSIFIED//FOR OFFICIAL USE ONLY
1338	09BAKU430	AZERBAIJANI PRESIDENT REPEATS REQUEST FOR A SECURITY GUARANTEE	26.05.2009	SECRET//NOFORN
	09MOSCOW1225	RUSSIA'S HARDENING VIEWS ON SPHERE OF INFLUENCE	14.05.2009	CONFIDENTIAL
1339	09BAKU433	AZERBAIJANI DEFENSE MINISTER: SEEKING STRONG RELATIONS, MORE U.S. SUPPORT	01.06.2009	CONFIDENTIAL
1387	09BAKU585	EVALUATING AZERBAIJANI FACILITIES DEMARCHE	23.07.2009	SECRET
1434	09BAKU746	AZERBAIJAN'S REACTION TO MISSILE DEFENSE ALL ABOUT GABALA	18.09.2009	CONFIDENTIAL
1458	09BAKU818	Iran drugs GABALA radar	15.10.2009	SECRET
1506	09BAKU943	C-REN-02185: AZERBAIJAN'S CONTRIBUTIONS TO NORTHERN DISTRIBUTION NETWORK	08.12.2009	SECRET

1510	09BAKU963	AZERBAIJAN: COMUSAFE VISITS KEY AIR BASE	14.12.2009	SECRET
------	-----------	--	------------	--------

DOD – ԱՄՆ Պաշտպանության նախարարություն: DAS – ԱՄՆ պաշտպանության նախարարի տեղակալ

Աղյուսակում ներկայացված 44 հաղորդագրություններից 14-ականը թվագրված են 2006 և 2007թթ., 3 հատը՝ 2008թ.¹³ և 13-ը՝ 2009թ.: Բերված հաղորդագրություններից 4-ն ունեն գաղտնիության բարձր և զգայունության առավելագույն աստիճան (*SECRET/NOFORN*), 9 հատը գաղտնի են (*SECRET*), մեկը՝ կոնֆիդենցիալ, ոչ օտարազգիների համար (*CONFIDENTIAL/NOFORN*), 28-ը՝ կոնֆիդենցիալ (*CONFIDENTIAL*), ևս 3-ը գաղտնիացված չեն (միայն պաշտոնական օգտագործման համար):

Բովանդակային առումով բերված հաղորդագրություններից 13-ը վերաբերում են Գաբալայի ռադիոլոկացիոն կայանին¹⁴ (Թիվ 16, 282, 318, 1210), 5-ը՝ Իսրայելի հետ Ադրբեջանի ռազմական համագործակցությանը (Թիվ 16, 282, 318, 1210)¹⁵:

Գաղտնիության բարձր և զգայունության առավելագույն աստիճան ունեցող 4 հաղորդագրություններից առաջինը (Թիվ 63) թվագրված է 2006թ. մարտի 23-ով և նվիրված է 2006թ. մարտի 29-ին նախատեսված ԱՄՆ-Ադրբեջան ռազմաքաղաքական խորհրդակցությանը, որն առաջինն էր՝ սկսած 2004-ից: Համաձայն հաղորդագրության հեղինակ՝ Բաքվում ԱՄՆ դեսպան Հարնիշի, սա հիանալի առիթ էր, ի թիվս այլ հարցերի, ընդգծել ադրբեջանական «Նասոնայա» ռազմաօդային բազայի (*Nasosnoya Air Base*) մոդեռնիզացիայի կարևորությունն ԱՄՆ-Ադրբեջան ռազմաքաղաքական համագործակցության, ինչպես նաև ՆԱՏՕ *IPAP* ծրագրի համար: Հաղորդագրությունում նշվում է նաև, որ ադրբեջանական պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի նախարարի տեղակալ Արազ Ազիմովի (*Araz Azimov*) խնդրանքով օրակարգ է մտցվել նաև Լեռնային Ղարաբաղում խաղաղություն հաստատելու հարցը, ուր, ի թիվս այլոց, հետաքրքրված է լսել ԱՄՆ տեսակետն այստեղ խաղաղապահ ուժերի հնարավոր տարբերակների մասին:

Հաջորդը Թիվ 616, *07BAKU 41* հաղորդագրությունն է (տե՛ս վերը՝ Նկար 21.3)՝ թվագրված 2007թ. հուլիսի 5-ով և նվիրված ԵՄՍՊ պայմանագրին Ադրբեջանի մորատորիում հայտարարելու սպառնալիքներին: Ընդհանուր առմամբ, այս սպառնալիքները, ինչպես նաև հունիսի 15-ին ԵՄՍՊ արտահերթ կոնֆերանսում Ադրբեջանի կողմից հայտարարված «*ֆորսմաժորային*» իրավիճակը Բաքվում ԱՄՆ դեսպանը նկարագրում է որպես ադրբեջանական իշխանությունների հերթական բլեֆը (տե՛ս նաև Գ. 5-ում):

3-րդը՝ Թիվ 1210, թվագրված է 2009թ. հունվարի մարտի 13-ով և նվիրված է Իսրայելի հետ Ադրբեջանի սերտ ռազմաքաղաքական համագործակցությանը: Այստեղ ընդգծվում է, որ «Իսրայելի հետ սերտ կապերի շնորհիվ Ադրբեջանին հասու է դառնում այնպիսի որակներով սպառազինություն, որն այլ կերպ այդ երկիրը չի կարող ձեռք բերել ոչ ԱՄՆ-ից, ոչ Եվրոպայից (տարատեսակ իրավական խոչընդոտների հետևանքով), ոչ նույնիսկ հետխորհրդային իր մատակարարներից՝ Բելառուսից և Ուկրաինայից: Մինչ արևմտյան տերությունները զգուշավոր մոտեցում են ցուցաբերում Ադրբեջանին ցամաքային մարտական համակարգեր վաճառելու հարցում՝ վախենալով վերջինիս դրդել Լեռնային Ղարաբաղում և գրավյալ տարածքներում պատերազմը վերսկսելուն, Ադրբեջանին սպառազինության ծավալուն մատակարարումներում Իսրայելն իրեն միանգամայն ազատ է զգում և իր այս հարուստ հաճախորդից մեծ շահույթ է ստանում» (Թիվ 1210, 5.(C): Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. 5, բաժին 5.3-ում՝ 2011-12թթ. նվիրված հատվածում):

¹³ Հասկանալի է, որ սա չի նշանակում, թե, օրինակ, ողջ 2008-ին Բաքվում ԱՄՆ դեսպանությունը կազմել է ԱՀ ռազմական ոլորտին վերաբերող միայն այս 3 հաղորդագրությունը: Պարզապես հենց դրանք են զետեղված *Wikileaks*-յան հաղորդագրությունների Խմբաքանակ Ա-ում:

¹⁴ Խոսքը Ադ.ԽՍՀ Կուսկաշենի մոտ տեղակայված Հրթիռային հարձակման նախագուշացման համակարգի (*СІРН*) «*Дарял*» տիպի ռադարային կայանքի մասին է:

¹⁵ Թիվ 281 և 282 հաղորդագրությունները բովանդակային առումով համընկնում են, թեև *Wikileaks* կայքի Խմբաքանակ Ա գրադարանում ունեն տարբեր ինդեքսներ (*06BAKU1540* և *06BAKU1541*) և տարբեր գաղտնիության աստիճան:

Գաղտնիության բարձր և զգայունության առավելագույն աստիճան ունեցող վերջին հաղորդագրությունը՝ Թիվ 1227, (09BAKU73) թվագրված է 2009թ. հունվարի 29-ով և նվիրված է ՌԴ-ի կողմից Հայաստանին սպառազինությունների ենթադրյալ մատակարարման հարցին: Այս թեմային է առնչվում նաև Մոսկվայում ԱՄՆ դեսպանության 09MOSCOW313 հաղորդագրությունը՝ թվագրված 2009թ. փետրվարի 10-ով (այս հարցի շուրջ ավելի մանրամասն տե՛ս Գ. 5, բաժին 5.3-ում՝ 2009թ. նվիրված հատվածում):

SOCAR ընկերության մինչև 2007թ. սկիզբը ստորագրած ԱԲՀ-ները, դրանցում ունեցած մասնաբաժինը և կոնտրոլիումների սկզբնական կազմը			
No	ԱԲՀ ստորագրման /ուժի մեջ մտնելու ժամանակը	Աձխաջրածինների դաշտի անվանումը	Կոնտրոլիումի կազմը ստորագրման պահին. SOCAR և այլ ընկերությունների մասնաբաժինները (%)
1	20.09.94/02.12.94	Azeri Chirag Guneshli	SOCAR(10); BP (34.1367); UNOCAL (10.2814); LUKOIL (10.0); STATOIL (8.5633); EXXONMOBIL (8.0006); TPAO (6.75); DEVON ENERGY (5.6262); ITOCHU (3.9205); DELTA HESS (2.7213)
2	10.11.95/ 13.02.96	Garabag	SOCAR (7.5); LUKOIL (12.5); DEVON ENERGY (30.0); AJIP-LUKOIL (45); AJIP (5)
3	04.06.96/04.10.96	Shah Deniz	SOCAR (10); BP (25.5); STATOIL (25.5); LUKOIL (10); TOTAL FINA ELF (10); OIEC (10); TPAO (9)
4	14.12.96/25.02.97	Dan Ulduzu, Ashrafi	SOCAR (20); BP (30); UNOCAL(25.5); ITOCHU (20); DELTA (4.5)
5	13.01.97/13.06.97	Lankaran-Deniz, Talysh-Deniz	SOCAR (25); ELF (40); TOTAL (10); DEMINEX (10); OIEC (10); PETROFINA (5)
6	03.07.97/05.12.97	Yalama	SOCAR (40); LUKOIL (32.4); ARCO (27.6)
7	01.08.97/05.12.97	Absheron	SOCAR (50); CHEVRON (30); TOTAL (20)
8	01.08.97/05.12.97	Nakhchivan	SOCAR (50); EXXONMOBIL (50)
9	01.08.97/05.12.97	Oguz	SOCAR (50); EXXONMOBIL (50)
10	02.06.98/07.07.98	Kurdashi, Araz-Deniz, Kirgani-Deniz	SOCAR (50); AJIP (25); MITSUI (15); TPAO (5); REPSOL (5)
11	20.07.98/01.12.98	Inam	SOCAR (50); LASMO (12.5); BP (25); CTK (12..5)
12	20.07.98/18.12.98	Araz, Alov, Sharg	SOCAR (40); BP (15); STATOIL (15); TPAO (10); ALBERT ENERGY (5); EXXONMOBIL (15)
13	25.12.98/11.06.99	Atashgah, Yanan Tava, Mugan-Deniz	SOCAR (50); JAPEX (22.5); INPEX (12.5); ITOCHU (7.5); TELKOKU (7.5)
14	02.06.98/13.11.98	Janub-Garb Gobustan	SOCAR (20); CNPC (50.26); Commonwealth Oil & Gas (29.74)
15	21.07.98/20.11.98	Muradkhanli, Zardab, Jafarli	SOCAR (50); Ramco (50)
16	02.06.98/16.04.99	Kursangi, Garabagli	SOCAR (50); Frontiera Resources (30); DELTA-HESS (20)
17	27.04.1999	Savalan, Dalga,/Lerik-Deniz, Jenub	SOCAR (50); ExxonMobil (30); ?(20)
18	27.04.99/21.04.00	Zafar, Mashal	SOCAR (50); EXXONMOBIL (30); Conoco (20)
19	27.04.99/09.06.00	Padar blok	SOCAR (20); Moncrief Oil (80)
20	12.09.00/25.10.00	Mishovdag, Kamaledin	SOCAR (15); Moncrief Oil (49.7); Petoil (35.3)
21	09.01.01/12.06.01	Zig, Hovsan	SOCAR (50); LUKOIL (50)
22	04.06.03/02.12.03	Pirsaat	SOCAR (20); SHENGLI (50); INTERSUN (30)
23	29.09.04/29.04.05	Binagadi, Kirmagi, Chakhnaglar, Sulutepe, Masazir, Fatmai, Shabandag, Sianshor	SOCAR (25); AZEN (75)
24	18.06.04/29.04.05	Garachukhur	SOCAR (25); Noble Sky (75)
25	05.11.04/29.04.05	Murovdag	SOCAR (50); Caspian Energi Europ (50)
26	16.08.2005	Surakhani blok	SOCAR (25); Rafi Oil FZE (75)

Կասպից ծովի սահմանազատման խնդիրը

Կասպից ծովի սահմանազատման խնդիրը, առանց չափազանցության, ընկած է «Հարավային Կովկաս - Կասպից ծ. - Միջին Սսիա» տարածաշրջանի տնտեսական, սոցիալական, բնապահպանական, քաղաքական և աշխարհաքաղաքական բնույթի լրջագույն խնդիրների հիմքում, հանդիսանում է տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների որոշիչ գործոն: Այստեղ խոսքը, բնականաբար, Կասպիցի ածխաջրածինների և այլ բնական պաշարների մասին է, բայց ոչ միայն: Գրեթե նույն կարևոր են Կասպիցի գուտ աշխարհագրական դիրքի արժանիքները, ենթակառուցվածքային և հաղորդակցային եզակի հնարավորությունները¹⁶: Զարմանալի չէ, որ Կասպիցի սահմանազատման խնդրի ազդեցությունը նկատելի է անգամ տարածաշրջանից դուրս՝ Թուրքիայի, Իսրայելի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Չինաստանի և այլ երկրների համար:

Խնդրի համարժեք ընկալումը պահանջում է գոնե հակիրճ անդրադարձ հարցի պատմությանը: Ստորև բերվող սակավաթիվ փաստերը, ըստ էության, ընկած են այս հարցին նվիրված հսկայածավալ գրականության հիմքում:


Կասպիցը ԽՍՀՄ-ի և Իրանի միջև (1921-1991թթ.)

ՌԽՖՍՀ և Իրանի միջև 1921թ. փետրվարի 26-ին կնքված պայմանագրով հայտնվում է, որ «Ռուսաստանը չեղյալ է համարում Իրանի հետ [ռուսական] Արքայական կառավարության բոլոր պայմանագրերը և համաձայնագրերը, որոնք նվաստացնում էին պարսիկ ժողովրդի իրավունքները» ([1], С.151): Չեղյալ էին ճանաչվում նաև երրորդ երկրների հետ ռուսական Արքայական կառավարության բոլոր պայմանագրերը և համաձայնագրերը, որոնք «ի վնաս էին կամ առնչվում էին Պարսկաստանին» ([1], С. 536-544): Այսպիսով, 1921թ. պայմանագրով չեղյալ դարձան 1828թ. Թուրքմենչայի պայմանագրի դրույթները, իսկ «Բարձր պայմանավորվող կողմերը» հավասար իրավունք ստացան ազատորեն նավարկել Կասպիցում՝ սեփական դրոշի ներքո: 1921թ. պայմանագիրը Կասպիցի ջրավազանի որևէ սահմանազատող գիծ չէր սահմանում՝ ընդգծելով, որ այն բաց է երկկողմ նավարկության համար: 1927թ. հոկտեմբերի 1-ին ԽՍՀՄ-ի և Պարսկաստանի միջև կնքվեց Չեզոքության երաշխավորման մասին պայմանագիրը, որը հաստատեց 1921թ. պայմանագրի բոլոր դրույթները: Լրացուցիչ նոտաներում ևս մեկ անգամ ընդգծվեց, որ Կասպիցը «բացառապես սովետա-պարսկական ծով» է ([2], С.429): Ինչպես և նախորդը, 1927թ. պայմանագիրը նույնպես չէր սահմանում Կասպիցի ջրավազանը սահմանազատող որևէ գիծ: Դրան հաջորդեց 1931թ. Համաձայնագիրը բնակավայրերի, առևտրի և նավարկության մասին ([3], С. 595-606), որը դարձավ պայմանագիր՝ ստորագրված 1935թ. օգոստոսի 27-ին: Վերջապես, 1940թ. մարտի 25-ին ԽՍՀՄ-ի և Պարսկաստանի միջև ստորագրվեց Առևտրի և նավարկության մասին պայմանագիրը ([1], С. 536-544): Բոլոր այս համաձայնագրերն ու պայմանագրերը հաստատում էին հիշյալ դրույթը:

Ընդգծենք կարևորագույն երկու հանգամանք: Նախ, առ այսօր՝ 2013թ., Կասպիցի իրավական կարգավիճակը սահմանող և կարգավորող միակ վավեր միջազգային փաստաթղթերը հանդիսանում են 1921, 1935 և 1940թթ. պայմանագրերը ՌԽՖՍՀ-ի (ԽՍՀՄ) և Պարսկաստանի միջև [4-6]: Երկրորդ՝ վերը նշված բոլոր պայմանագրերը չեն սահմանում ԽՍՀՄ-ի և Պարսկաստանի միջև Կասպիցը զատող որևէ սահմանագիծ: Ավելին, դրանք բոլորն ընդգծում են Կասպիցի երկկողմ նավարկության համար բացությունը և «փակությունը»՝ երրորդ կողմերի համար: Իսկ տնտեսական գործունեության համար նախատեսում էին միայն 10 մղոնանոց ավեզայա տարածք ԽՍՀՄ-ի և Իրանի համար: Ընդ որում, անգամ այս ավեզայա տարածքը չունի պետական սահմանի որևէ երանգ: Օրինակ, 1940թ. պայմանագիրը հատուկ

¹⁶ Էլ չենք խոսում կենսաբազմազանության տեսանկյունից Կասպիցի եզակի նշանակության մասին, որը, սակայն, մեր կոպիտ ժամանակներում քչերին է հետաքրքրում:

սահմանում էր ԽՍՀՄ և Պարսկաստանի իրավունքը՝ ձկնորսական և այլ արդյունահանում իրականացնել Կասպիցի ողջ ջրավազանում, բացի հակառակ կողմի 10 մղոնանոց ավիեզրյա հատվածից ([1], С. 536-544): Ընդգծենք նաև այն կենտրոնական նշանակության հանգամանքը, որ 1921, 1935 և 1940թթ. պայմանագրերով սահմանված Կասպիցի ներմայրցամաքային սովետա-իրանական փակ ծովի կարգավիճակն ընդունվեց աշխարհի պետությունների ողջ միջազգային հանրության կողմից:



Նկար 23.1. Կասպիցի սահմանագատման մոտեցումները. ա) Կասպիցը՝ փակ սովետա-իրանական ծով: Բերվում է նաև Աստարա-Հասան Կուլի գիծը; բ) Կասպիցը՝ ներքին ծով (իրանական տարբերակ); գ) Կասպիցը՝ սահմանային լիճ (ադրբեջանական և դազախական տարբերակ):

Մյուս կողմից, հայտնի է¹⁷, որ ԽՍՀՄ Ներքին գործերի ժողկոմատի (*НКВД СССР*) գաղտնի ներգերատեսչական ակտով 1935-ին ներմուծվում է ԽՍՀՄ-ի և Պարսկաստանի միջև Կասպիցով անցնող գատող գիծը, որը Հասան Կուլին (Թուրքմենական ԽՍՀ) կապում էր Աստարային (Ադրբեջանական ԽՍՀ)¹⁸ ([8, 9], С. 65, տե՛ս նաև Նկար 23.1ա): Իսկ սկսած 1949-ից, խախտելով նշված պայմանագրերի դրույթները, ԽՍՀՄ-ը սկսեց նավթախուզական և նավթարդյունահանման աշխատանքներ իրականացնել իր 10-մղոնանոց ավիեզրյա տարածքից շոշափելիորեն դուրս՝ այն *ակվատորիայում*, որն այժմ կոչվում է «Կասպիցի ադրբեջանական հատված»: Հասկանալի է, որ ԽՍՀՄ ՆԿՎԴ գաղտնի ներգերատեսչական ակտը երբևէ չի հանդիսացել և չի հանդիսանում միջազգային պայմանագրի ուժ ունեցող փաստաթուղթ: Ուստի, զարմանալի չէ նաև, որ Պարսկաստանը երբևէ չի ընդունել և ներկայում էլ չի ընդունում Կասպիցի ջրավազանից իրեն սահմանագատող որևէ միջազգայնորեն վավեր սահմանի առկայությունը: Ոչ էլ միջազգային իրավունքի տեսանկյունից վավեր՝ Կասպիցը երրորդ կողմերի համար բացող որևէ գործունեություն: Մեկ անգամ չէ, որ Պարսկաստանը հստակորեն ցույց է տվել, որ չի ընկալում «Աստարա - Հասան Կուլի» գիծն իբրև պետական սահման: Օրինակ, 1976թ. ԽՍՀՄ Արտգործնախարարություն ներկայացրած նոտայում պարսկական կողմը նշում էր. «Գոյություն չունի ոչ մի պայմանագիր, համաձայնագիր կամ գործող որևէ այլ պայմանավորվածություն, որը կսահմաներ ԽՍՀՄ-ի և Պարսկաստանի միջև ծովային սահմանը Կասպիցում» ([5], տե՛ս Նկար 23.1բ):

Կասպիցի սահմանագատման խնդիրը նոր, մտահոգիչ երանգ ստացավ 1982-ին, երբ ԽՍՀՄ-ում սկսեցին երևան գալ ապագա անկայունության առաջին չարագույժ նշանները: 1982-ին, ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Լ.Բրեժնևի մահից հետո, ընդունվում է «ԽՍՀՄ պետական

¹⁷ Սակայն զարմանալիորեն քիչ է մեջբերվում, հատկապես հարցին նվիրված արևմտյան վերլուծական հրապարակումներում:
¹⁸ Այստեղ չի օգտագործվում այս բնակավայրի Աստարաչայ (*Астарачай*) անվանումը:

սահմանի մասին» նոր օրենքը: Ամենայն հավանականությամբ, այդ տարի նույնքերին ԽՄԿԿ Քաղբյուրոյի անդամ և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի առաջին տեղակալ դարձած Ադր.ԽՍՀ ՊԱԿ նախկին ղեկավար Հ.Ալիևի ակտիվ աջակցությամբ: Այս օրենքով, ի շարս այլոց, փորձ էր արվում «Աստարա - Հասան Կուլի» գծին շնորհել ԽՍՀՄ պետական սահմանի կարգավիճակ պարսկական իրավասության տակ թողնելով Կասպիցի ավազանի միայն 12%-ը: Այս փորձը, հարցով զբաղվող մասնագետների հիմնավոր կարծիքով, միջազգային իրավունքի տեսանկյունից խափանված պետք է համարել:

ԽՍՀՄ 1982թ. հիշյալ օրենքի համապատասխան դրույթը, որը կոչված էր «Աստարա - Հասան Կուլի» գիծը ներկայացնելու իբրև ԽՍՀՄ պետական սահման, հնչում է հետևյալ կերպ. «Լճերի և այլ ջրավազանների վրա ԽՍՀՄ պետական սահմանը հաստատվում է տվյալ ջրավազան դուրս եկող ԽՍՀՄ ցամաքային պետական սահմանների երկու կետերը միացնող ուղղիղ գծով, *եթե այլ բան նախատեսված չէ ԽՍՀՄ միջազգային պայմանագրերով*» (ընդգծումը մերն է- Ա.Ս.) [5, 7]: Սակայն 1982-ին ոչ մեկը չէր հայտարարել ոչ ԽՍՀՄ-ի և Իրանի միջև 1935 և 1940թթ. միջազգային պայմանագրերը, ոչ էլ ՌԽՖՍՀ-ի և Իրանի միջև 1921թ. պայմանագիրը: Իսկ դրանք, Կասպիցի պարագայում, հենց «այլ բան» էին նախատեսում: Եվ նորից, զարմանալի չէ, որ ոչ 1982-ին, ոչ այսօր Իրանը «Աստարա - Հասան Կուլի» գիծը որպես պետական սահման չի ճանաչում:

Կասպիցը ԽՍՀՄ փլուզումից հետո. 1994-ի Դարի գործարքը

ԽՍՀՄ փլուզումը միանգամից ակտուալացրեց Կասպիցի սահմանագատման հարցը, էլ ավելի հրատապ դարձրեց այն այդ ժամանակ ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների ֆոնին: Այստեղ նախևառաջ անհրաժեշտ է ընդգծել, որ ԽՍՀՄ փլուզումը և 4 նորանկախ հանրապետությունների (ՌԴ, Ադրբեջան, Ղազախստան և Թուրքմենստան) գոյացումը միջազգային իրավունքի տեսանկյունից չեն փոխել և չէին կարող փոխել ԽՍՀՄ-ի և Իրանի միջև 1935 և 1940թթ. միջազգային պայմանագրերի երկկողմ բնույթը:

Համաձայն 1978թ. Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի, որը կիրառվում է այն դեպքերում, երբ պայմանագրի կողմ հանդիսացող պետությունից անջատվում են առանձին հատվածներ կամ գոյանում են նորերը, սահմանվում է. «Ցանկացած պայմանագիր, որն անջատման պահին ուժի մեջ էր նախորեն պետության համար, շարունակում է ուժի մեջ լինել նորաստեղծ իրավահաջորդ բոլոր պետությունների համար»: Ընդ որում, այս առումով չի պահանջվում այլ կողմի (կողմերի) նույնիսկ հատուկ ծանուցում [10]: Այսպիսով, նորանկախ ՌԴ-ն, Ադրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը շարունակում են ԽՍՀՄ-ի և Իրանի միջև 1935 և 1940թթ. միջազգային պայմանագրերի կողմ հանդիսանալ, իսկ այս պայմանագրերը ներկայում սահմանում են Կասպիցի միջազգային կարգավիճակը: Միջազգային իրավունքի նորմերից բխող այս իրողությունն ընդունվում է ինչպես հարցով զբաղվող մասնագետների, այնպես էլ միջազգային հանրության կողմից:

Սակայն ԽՍՀՄ փլուզումը Կասպիցի տարածաշրջանում աշխարհաքաղաքական և իրավական վակուում առաջացրեց, որն էլ հանգեցրեց մի շարք գործընթացների մեկնարկին՝ միտված ԽՍՀՄ/ՌԴ հետագա թուլացմանը, ՌԴ և Իրանի (և Հայաստանի) մեկուսացմանը տարածաշրջանի ենթակառուցվածքային զարգացումներից: Իրանը հիմնականում ընթանում էին Արևմուտքի, Թուրքիայի և Իսրայելի աջակցությամբ և իրենց արտահայտումները գտան Մեծ Միջին Արևելքի կերտման հովանու ներքո՝ «Հարավային Կովկաս - Կասպիցի ավազան - Միջին Ասիա» միացյալ տարածաշրջանի ծրագրում, «Ալիևի դոկտրինի» հիմունքներում [11]: Այս գործընթացներն առավել ընդգծված արտահայտվեցին Ադրբեջանում և դրսևորվեցին նորաստեղծ Ադրբեջանական Հանրապետության ագրեսիվ և զավթողական քաղաքականությունում: Ադրբեջանը ոչ միայն դիմեց միանգամայն օրինական ու խաղաղ ճանապարհով ինքնորոշված ԼՂՀ-ի դեմ պատերազմի, այլև իրականացրեց Հարավային Կասպիցի մի հատվածի միակողմանի զավթումը:

Սկսենք նրանից, որ դեռ ԽՍՀՄ փլուզման նախօրեին հրապարակվեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի և ԽՍՀՄ Նավթագազային արդյունաբերության նախարարության

համատեղ՝ 1991թ. հունվարի 18-ի Թիվ 25/25 որոշումը Ազերի¹⁹ նավթադաշտի յուրացման և *Каспморнефтегаз* համատեղ ընկերության հիմնադրման մասին: Հաջորդ տարի՝ 1992թ. սեպտեմբերի 7-ին Ադրբեջանի, ՌԴ և *BP/Stateoil* ընկերությունների հետ կնքվեց Շահ Դենիզի գազային դաշտի յուրացման մասին պայմանագիրը: Իսկ 1993թ. մարտին ադրբեջանական *SOCAR*-ի և *BP/Stateoil* ընկերությունների միջև կնքվեց Շահ Դենիզ գազային ու Չիրազ²⁰ նավթային դաշտերին վերաբերող պայմանագիրը [12, p. 286]: Հատկանշական է, որ հաջորդ տարի նշված գործարքով սահմանված պայմանագրում հայտնվում է թուրքական *Turkish Petroleum* ընկերությունը, որին իր մասնաբաժնի մի մասը զիջեց բրիտանական *BP*-ն: *SOCAR*-ի նախկին տնօրեն Ս.Բադիրովի պնդմամբ, *BP*-ն այս քայլին դիմեց՝ քաջատեղյակ լինելով ԱՀ առաջին նախագահ Ա.Էլչիբեյի թրքասեր դիրքորոշման մասին, նպատակ ունենալով հաջողության հասնել և երաշխավորել ներդրումները [13, p. 48]: Տեղի ունեցածի կարևորությունն ընդգծվում է նրանով, որ ադրբեջանական կողմը նույն ժամանակ մերժեց այս գործարքում ռուսական *ЛУКОЙЛ*, ֆրանսիական *Total* և իրանական ընկերության հայցը: Սակայն, ցանկանալով շահագրգռել ռուսական կողմին, Ադրբեջանը նախ 1993թ. սեպտեմբերին մտավ ԱՊՀ-ի մեջ, իսկ 1993թ. նոյեմբերի 20-ին թույլատրեց *ЛУКОЙЛ*-ին դառնալ կոնսորցիումի անդամ: Ընդ որում, այս պայմանագիրը ռուսական կողմից ստորագրած Էներգետիկայի և վառելիքի նախարար Յու.Շաֆրաննիկը հայտարարեց, որ ռուսական բաժնեմասը կազմում է 20%: Սակայն ադրբեջանական կողմը հայտնեց, որ իրականում այն կազմում է 10% [12, p. 289]: Բոլոր այս պայմանագրերը ոչ միայն կոպտորեն խախտում էին Կասպիցի կարգավիճակը սահմանող միջազգային պայմանագրերի ճանաչված դրույթները, այլև ներկայում Հարավային Կովկասում ու Կասպիցի տարածաշրջանում քաղաքական, ազգային և քաղաքակրթական պառակտման, ռազմականացման ու աշխարհաքաղաքական հակամարտության սերմեր էին պարունակում:

Այս գործընթացներում հատկապես նշանակալի է ՌԴ երկակի դերակատարումը: Կասպիցի կարգավիճակը միակողմանիորեն խախտող այս գործարքներում իր մասնակցությամբ ՌԴ-ն որոշակի առումով վավերացնում էր Կասպիցի պառակտումը 1990-ականների սկզբին: Իսկ հետո, երբ ՌԴ իշխանական վերնախավին պարզ դարձավ ՌԴ ազգային շահերին լուրջ աշխարհաքաղաքական վտանգներ բերող այս գործընթացների էությունը, ՌԴ-ն ջանաց հեռու մնալ դրանցից (տե՛ս ստորև): Հարցով զբաղվող քաջատեղյակ մի մասնագետի կարծիքով.

«Կրեմլը միաժամանակ երկու իրարամերժ ռազմավարություն էր տանում: Դրանցից առաջինին աջակցում էին նախկին արտգործնախարար Ա.Կոզիրևը և ՌԴ Արտաքին հետախուզության ծառայության ղեկավար Ե.Պրիմակովը: Այն ենթադրում էր Ադրբեջանի նկատմամբ կոշտ դիրքորոշում... Նրանք համոզեցին ՌԴ նախագահ Բ.Ելցինին 1994թ. հուլիսի 21-ին ստորագրել «Կասպից ծովում ՌԴ շահերի պաշտպանության մասին» թիվ 396 գաղտնի դիրեկտիվը, որն այս տարածաշրջանը սահմանում էր ՌԴ ազդեցության ոլորտ: ...Նրանք ձևում էին բանեցնում ՌԴ վարչապետ Վ.Չեռնոմիրոյի մի վրա՝ Ադրբեջանին ստիպել զիջումների գնալ երկրում [ռուսական] ռազմական բազաների ստեղծման, պետական սահմանների վերահսկման գործում, և պնդում էին դարաբաղյան հակամարտության գոտում բացառապես ռուսական խաղաղապահ զորակազմի օգտագործման հարցում: ...Մյուսը ղեկավարում էր ՌԴ վարչապետ Վ.Չեռնոմիրոյին, որը ներկայացնում էր ՌԴ վառելիքաէներգետիկ շահերը: Նա հակված էր ադրբեջանական ծրագրերում ռուսական մասնակցությանը՝ հակազդելով Կոզիրևի և Պրիմակովի ձևումներին՝ դուրս բերել *ЛУКОЙЛ*-ը ադրբեջանական պայմանագրերից» [14]²¹:

Բոլոր այս գործընթացները գազաթնակետին հասան 1994-ին, երբ մայիսի 5-ին Բիշքեկում ստորագրվեց ԼՂՀ-ում հրադադարի մասին եռակողմ արձանագրությունը, իսկ սեպտեմբերի 20-ին Բաքվում ստորագրվեց Ազերի-Չիրազ-Գյունեշլի (ԱՉԳ) նավթադաշտի յուրացման Հ.Ալինի

¹⁹ Նախկինում «Բաքվի 26 կոմիսարների» անվան: Այս դաշտը վիճարկող Թուրքմենստանն այն անվանում է Խազար:

²⁰ Բացված է 1985-ին: Այս դաշտը վիճարկող Թուրքմենստանն այն անվանում է Օսման:

²¹ ՌԴ այս հակասական ու երկակի մոտեցման տարրերը կարելի է նշմարել նաև այսօր, օրինակ՝ Ադրբեջանին և Հայաստանին ԾՄՊ մատակարարումների հարցում (տե՛ս Գ. 5):

հեղինակած և «Ալիևի դոկտրինի» հիմքում ընկած այսպես կոչված «Դարի գործարքը»²² (տե՛ս Գ. 2): Դրան նախորդել էր 1994-ի ողջ ընթացքում Հ.Ալիևի տենդագին գործունեությունը Լոնդոն, Փարիզ, Անկարա և Վաշինգտոն այցերի միջև: Այսպես, Լոնդոնում 1994թ. մարտին Ալիևը և վարչապետ Ջ.Մեյջորը մի շարք փաստաթղթեր ստորագրեցին, որոնք երաշխավորում էին բրիտանական *BP*-ի դերակատարումն ադրբեջանական նավթագազային գործարքներում: Այս փաստաթղթերում նշվում էր նաև *ЛУКОЙЛ*-ի մասնակցությունը Ազերի և Գյունեշլի նավթադաշտերի ծրագրում [15]: Նույն թվականի մարտին Թուրքիան հայտարարեց Մոնտրոյի դոկտրինի կասեցման մասին²³ և Բոսֆորի ու Դարդանեղի նեղուցներում միակողմանիորեն մտցրեց իր կողմից մշակված անցման գրաֆիկ և նավերի տոննաժի սահմանափակումներ: Տազնապած Ռուսաստանը դիմեց ՄԱԿ-ին թուրքական այս որոշման բողոքարկումով, սակայն 1994թ. մայիսի 21-ին ՄԱԿ Ծովային միջազգային կառույցը մերժեց այն՝ հաստատելով թուրքական առաջարկները:

Ի պատասխան՝ ՌԴ-ն (վերջապես) առաջ քաշեց Կասպիցի կարգավիճակի հարցը: 1994թ. ապրիլի 27-ին ՌԴ արտգործնախարարությունը նույնիսկ համապատասխան նոտա հանձնեց Մոսկվայում ՄԲ դեսպան Բ.Ֆոլին: Այն առարկություններ էր պարունակում Լոնդոնում Ալիևի և Մեյջորի ստորագրված էներգետիկայի ոլորտում համագործակցության մասին հուշագրում «Կասպից ծովի ադրբեջանական հատված» եզրույթի կապակցությամբ: Բայց արդեն ուշ էր: Ինչպես սիրում էր կրկնել ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահը՝ «*процесс уже пошел*»:

Եվ իրոք, բրիտանական արտաքին գործերի գերատեսչությունը շտապ խորհրդակցություններ հրավիրեց, իսկ ՄԲ էներգետիկայի նախարար Թ.Էգարը նույնիսկ Բաքու ժամանեց, որտեղ 1994թ. հուլիսի 1-ին որոշում ընդունվեց «հաշվի չառնել ՌԴ Արտգործնախարարության ապրիլյան նոտան: ՄԲ-ն մտադիր է շարունակել Ադրբեջանի հետ բանակցությունները Կասպիցում նավթարդյունահանման համատեղ ծրագրերի շուրջ»²⁴: Ավելին, Բաքվում ՄԲ դեսպան Թ.Յանգի հետ մոտավորապես այդ օրերին կայացած իր զրույցում նախագահ Հ.Ալիևը հայտնեց, որ խոսել է ՌԴ վարչապետի հետ, և որ Վիկտոր Ստեպանովիչը Մոսկվայում ՄԲ դեսպանին հանձնված և ոչ մի նոտայի մասին էլ տեղյակ չէ: Ըստ Հ.Ալիևի, ՌԴ վարչապետն իրեն հաղորդել էր, թե «Ադրբեջանը կարող է պաշտոնապես իր անունից հաղորդում տարածել, որ ՌԴ կառավարության օրակարգում Կասպից ծովի կարգավիճակի մասին հարցը դրված չէ»²⁵: Արդյունքում, ինչպես արդեն ասացինք, 1994թ. սեպտեմբերի 20-ին «Դարի գործարքը» ստորագրվեց բոլոր շահագրգիռ կողմերի միջև՝ հիմք դնելով Ադրբեջանի ռազմականանցմանը (տե՛ս Գ. 5) և այս երկրում բռնատիրական կլանաօլիգարխիկ իշխանական համակարգի հաստատմանը (տե՛ս Գ. 2):

Ինչևէ, ՌԴ արտգործնախարարությունը հետևողական եղավ և 1994թ. սեպտեմբերի 21-ին, ստորագրման հաջորդ օրն իսկ, պաշտոնապես հայտնեց, որ չի ընդունում «Դարի գործարքը»: Ստեղծված իրադրությունը, երբ ՌԴ Արտգործնախարարությունը չի ընդունում մի գործարք, որի տակ ստորագրել է ՌԴ էներգետիկայի նախարարը՝ ՌԴ վարչապետի ու կառավարության իմացությամբ ու հավանությամբ, բրիտանական *Էքոնոմիստ* հեղինակավոր պարբերականը

²² Հայրենական և այլ վերլուծաբանների նոր սերունդը հավանաբար չի հիշի, որ իրականում «Դարի գործարք» էր անվանվել XX դարի 80-ականների «խողովակներ՝ գազի դիմաց» ԽՍՀՄ-ԳՖՀ հայտնի պայմանագիրը՝ կնքված «Ուրենգոյ-Պամարա-Ուժգորոդ» գազային հսկայածավալ ծրագրի շրջանակներում: Այս երկու «Դարի պայմանագրերի» հիմքում ընկած ԽՍՀՄ(ՌԴ)-ԱՄՆ գլոբալ երկարատև հակամարտությունից բխող բազմաթիվ զուգահեռականների քննությունը չափազանց հետաքրքիր գործ կլինեք (տե՛ս [11, 12] և 1987թ. «*Контракт Века*» երկսերիանոց սովետական ֆիլմը):

²³ Իբր թե ի հակադրություն ԼՂՀ տարածքից հայկական ուժերի դուրս գալուն, ինչը կարող էր կասեցնել ԲԹՁ նավթամուղի կառուցումը:

²⁴ *HIA Assa-IRADA*, 4 հուլիսի 1994թ., c. 1.

²⁵ *HIA Assa-IRADA*, 7 հունիսի 1994թ., c. 2. Այս փաստի իսկությունը մեզ (և շատ ուրիշների) պարզել չհաջողվեց: Նկատենք, որ եթե այն իրոք համապատասխանում է իրականությանը, ապա Ռուսաստանի աշխարհաքաղաքական խորտակումների հարուստ պատմությունում Վիկտոր Ստեպանովիչն իր արժանի տեղը կգրավի Ղրիմը Ուկրաինային հանձնած Նիկիտա Մերգելիշի կողքին:

որակեց «տրագիկումեդիա» [16]: Այս ամենին վերջակետ դրեց ԱՄՆ նախագահ Բ.Քլինթոնը, որն իր հատուկ ուղերձում ոչ միայն շնորհավորեց ԱԶԳ յուրացման համար Դարի գործարքը՝ ստորագրած բոլոր կողմերին, այլև գոհունակություն հայտնեց նավթի տեղափոխման ճիշտ ճանապարհի ընտրելու կապակցությամբ: Խոսքն այստեղ, բնականաբար, ԲԹԶ նավթամուղի մասին էր: Մա ևս մեկ չափազանց տհաճ «նորություն» էր ՌԴ-ի համար:

Այսպիսով, «Դարի գործարքը» ստորագրվեց Կասպիցի իրավական կարգավիճակի կոպիտ խախտումով²⁶ և հիմք դրեց այստեղ հետագա կենտրոնախույզ գործընթացներին՝ ստեղծելով Կասպիցի առանձին հատվածի միակողմանի զավթման չափազանց վտանգավոր նախադեպ: Ավելին, ոգևորված «միջազգային հանրության» երկդեմի պահվածքով և իրական հակազդեցության բացակայությամբ՝ Ադրբեջանը դիմեց նույնիսկ ավելի մեծ իրավախախտման. օրենսդրորեն ամրագրեց Կասպիցի մի հատվածի իր զավթումը 1995թ. Սահմանադրության 2-րդ գլխի կետ 11-ում: Առ այսօր Ադրբեջանը Կասպիցի լիտորալ երկրներից միակն է, որ դիմել է այս աստիճան զավեշտալի քայլի: Նկատենք նաև, որ Ադրբեջանը նորագույն պատմության մեջ միակ երկիրն է, որ իր Սահմանադրությամբ ամրագրել է իր իսկ կողմից կատարված միջազգային իրավունքի տակ գտնվող տարածքների օկուպացիան, և դույզն-ինչ չի ենթարկվել որևէ մեղադրանքի կամ ճնշումների:


Մեզ մնում է տեսնել, թե ինչպես, ինչ իրավական փաստաթղթերի ու քարտեզների հիման վրա է որոշել Ադրբեջանական Հանրապետությունը տիրնալ Կասպիցի «իր հատվածին»: Որքան էլ ծիծաղելի թվա, միակ փաստաթուղթը, որն այս առումով կարողացավ ներկայացնել Ադրբեջանը, ԽՍՀՄ Նավթագազային արդյունաբերության նախարարության 1970թ. հաշվետվությունն էր, որտեղ բերվում էր մի քարտեզ (տե՛ս Նկար 23.2), ուր բերվում էին նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվող նավթախուզական աշխատանքների սեկտորները: Այս սեկտորները կառուցված են Կասպիցի ջրավազանի պայմանական միջնագծի²⁷ հետ միութենական հանրապետությունների ափեզրյա սահմանների կետերից ուղղահայցներով: Իսկ Իրանի հետ սահմանագատումը կատարված է Աստարա - Հասան Կուլի ուղիղ գծով: Ընդ որում, քարտեզի վերնագիրը հատուկ նշում է, որ քարտեզի մասշտաբը կամայական է: Ու ահա այս քարտեզն էր ներկայացնում Հ.Ալիևը դարի գործարքի կնքման ժամանակ [15]: Նույն այս քարտեզն է օգտագործում նաև Ի.Ալիևն իր «դարակազմիկ» գրքում [20]՝ անհրաժեշտ համարելով ուղեկցել այն հետևյալ դիտարկումներով (բերում ենք առանց թարգմանության).

«Срединная линия (как водная граница) была зафиксирована также в качестве административно-территориальной границы между соответствующими союзными республиками. Особое значение имеет совместное постановление Совета Министров Азербайджанской ССР и Министерства нефтяной и газовой промышленности СССР от 18 января 1991г. В нем отмечалось, что Азербайджан является единственным субъектом, обладающим правами на разведку и добычу минеральных ресурсов в определенном по срединной линии секторе с возможностью привлечения иностранных компаний, а также является собственником нефти, добытой в этом секторе. Следовательно, уже в советское время Азербайджан являлся собственником добытой нефти, и поэтому понятна его позиция не пересматривать этот статус... Акцентируя внимание на российско-персидском и советско-иранском Договорах 1921 и 1940гг., Россия умышленно игнорирует директиву, изданную в начале 1992г. Министерством топливной промышленности, которой предусматривалось распределение нефтяных месторождений Каспия между новыми независимыми государствами» [20]:

Ահա այսպես Ալիևներն իրենց աջակիցների հետ համատեղ միջազգային իրավունքի դաշտ բերեցին նոր, դեռ չլսված սուբյեկտներ ու փաստաթղթեր՝ ԽՍՀՄ Ներքին գործերի ժողովուստն իր 1935թ. գաղտնի միջգերատեսչական ակտով: Եվ ԽՍՀՄ Նավթագազային արդյունաբերության նախարարությունն իր 1970թ. աղավաղված քարտեզով:

²⁶ Հասկանալի է, որ ոչ Իրանը, ոչ Թուրքմենստանը չընդունեցին այս գործարքի լեգիտիմությունը:

²⁷ Կասպիցի ջրային հայելու որոշակի մակարդակի համար ֆիքսված հակադիր ափեզրերից հավասար հեռավորության վրա գտնվող կետերի բազմություն:




Նկար 23.2. Կասպիցի Ալիևյան սահմանագատումը:
Քարտեզի աղբյուրը՝ [20], նշումները մերն են– Ա.Մ.:

Չափազանց բնութագրական է այն հանգամանքը, որ իր պրիմիտիվ տրամաբանությամբ սա ճիշտ նույն հնարքն է, որը բանեցնում է Ադրբեջանը Ղարաբաղի հարցում: Այնտեղ դա միջազգային իրավունքի հետ ոչ մի աղերս չունեցող *ԱՀԱԿ*-ի 1923թ. հունիսի 7-ի որոշումն է: Այստեղ *ԽՍՀՄ ՀԿԵԿ*-ն է և Նավթագազային արդյունաբերության նախարարությունն՝ իրենց հիշյալ որոշումներով: Երբ իրեն անհրաժեշտ է, Ադրբեջանը ձևացնում է, որ *ԽՍՀՄ*-ը դեռ կա, և ժառանգել են խորհրդային դարաշրջանի բոլոր, նույնիսկ գաղտնի միջգերատեսչական որոշումների ուժը: Դե, իսկ երբ անհրաժեշտ է, Ադրբեջանը «հպարտորեն» հայտարարում է, որ ոչ մի կապ չունի Ադրբեջանական *ԽՍՀ*-ի հետ՝ դիմելով նոր ժամանակների տրամաբանությանը, իրողություններին և գործելակերպին:

Ինչպես կիսել Կասպիցը. գրաֆերի տեսության և Շտեյների կետերի մասին

Այժմ մի փոքր շեղվենք բոլոր առումներով տհաճ այս թեմաներից և կատարենք փոքրիկ շեղում մաթեմատիկայի գեղեցիկ (և օբյեկտիվ) աշխարհ: Դրա բաժիններից մեկում՝ գրաֆերի տեսությունում, հայտնի է հետևյալ գեղեցիկ արդյունքը: Ենթադրենք՝ տրված է եռանկյունի կազմող երեք կետ՝ A, B և C (Նկար 23.4a), որոնք անհրաժեշտ է միացնել իրար ուղիղ և չհատվող գծերով այնպես, որ դրանց գումարային երկարությունը լինի նվազագույն: Դա ամեննին էլ եռանկյան պարագիծը չէ, ինչպես կարելի էր կարծել (Նկար 23.4a-ում այն պատկերված է ընդհատ գծերով): Պարզվում է, որ գոյություն ունի մի կետ, այն կոչվում է Շտեյների կետ (նկարում՝ Sh1), որով անցնող և եռանկյունու գագաթները միացնող ուղիղ գծերից կազմված «ճանապարհն» (այն կոչում են *գրաֆ*) ունի ավելի փոքր երկարություն, քան պարագիծը կամ այս կետերն իրար միացնող ցանկացած այլ գրաֆ: Ասում են, որ այն հանդիսանում է *մինիմալ գրաֆ*: Ընդգծենք, որ սա վերաբերում է ցանկացած եռանկյան գագաթներին: Այլ խոսքերով, ցանկացած երեք կետ, որոնք չեն գտնվում միևնույն ուղիղ գծի վրա, միշտ կարելի է միացնել իրար մինիմալ գրաֆով՝ օգտագործելով Շտեյների միայն մեկ կետ:




Նկար 23.3. Բազմանկյունների վրա Շտեյների կետերով մինիմալ գրաֆեր:

- a) եռանկյան գագաթները միացնող մինիմալ գրաֆը միայն մեկ Շտեյների կետով՝ Sh1; b) քառանկյան մինիմալ գրաֆը՝ Շտեյների 2 կետով; c) հնգանկյան մինիմալ գրաֆը՝ Շտեյների 3 կետով (սա Կասպիցի միջնագծային սահմանագատման դեպքն է); d) վեցանկյան գագաթների մինիմալ գրաֆը պարագիծն է, Շտեյների կետեր գոյություն չունեն (հմմտ. Նկար 23.1բ-ի հետ):

Հետաքրքրական է, որ չորս գագաթների դեպքում գոյություն ունի Շտեյների արդեն երկու կետ, որով անցնող գրաֆը մինիմալ է (Նկար 23.3b, Sh1 և Sh2 կետերը): Հինգ գագաթների դեպքում կա Շտեյների երեք այդպիսի կետ (Նկար 23.3c, Sh1, Sh2 և Sh3 կետեր): Իսկ վեց և ավելի գագաթների դեպքում Շտեյների կետեր այլևս գոյություն չունեն, և, օրինակ, 6-անկյան գագաթներն իրար կապող մինիմալ գրաֆը 6-անկյան պարագիծն է (Նկար 23.3d): Այս գեղեցիկ արդյունքը Շտեյների կետերի հետ կապված՝ մեզ անհրաժեշտ ուշագրավ հատկություններից միակը չէ:

Պատկերացնենք, որ ունենք ծով, որի շուրջ կան հինգ ավերոյա պետություններ: Հայտնի են դրանց միջև ցամաքային սահմանները և այն կետերը, ուր հարևան երկու երկրների միջև ցամաքային սահմանները դուրս են գալիս ծովափ: Այժմ վերցնենք ապակի կամ *պլեքսիգլասի* երկու շերտ, որոնց վրա արտապատկերենք մեր ծովի ուրվագիծը, իսկ սահմանների և ծովափի հատման 5 կետերում անցքեր բացենք, որոնք միացնենք իրար ուղղահայաց ձողերով, երկու շերտերի մեջ բավարար հեռավորություն պահպանելով:



Նկար 23.4. Հնգագագաթ նվազագույն օճառաթաղանթ: Դրա եզրը (նշված է կարմիր գույնով) հանդիսանում է Շտեյնթրի մինիմալ գրաֆ և ներկայացնում է Կասայիցի միջնագծային սահմանազատման դեպքը (տե՛ս Նկար 234c):

Այժմ ամբողջությամբ ընկղմենք ստացված կոնստրուկցիան օճառաջրի տաշտակի մեջ և զգուշությամբ հանենք: Կայարգվի, որ օճառաջուրը մեր հինգ ձողերի շուրջ կպարուրվի ճիշտ այնպես, որ ստացված թաղանթի մակերեսը (և նրա եզրի երկարությունը) լինեն նվազագույն (Նկար 23.4): Այլ խոսքերով, մեր փորձում օճառաջուրը «գիտե» Շտեյնթրի թեորեմը և կպարուրվի ձողերին՝ ստեղծելով նվազագույն մակերեսով հատկանշական մի թաղանթ (Նկար 23.4-ում դրա եզրը պատկերված է կարմիրով)՝ օգտագործելով Շտեյնթրի այն երեք կետերը, որոնք պատկերել էինք Նկար 23.3c-ում²⁸: Իսկ ամենակարևորն այստեղ այն է, որ այս թաղանթը, ավելի ճիշտ՝ նրա եզրը կհանդիսանա այս 5 գագաթներով սահմանված մակերևույթի (ծովի) իրական միջնագիծը:

Դժվար չէ հասկանալ, թե ինչու ենք այս ամենն այստեղ շարադրում: Նկար 23.4-ում պատկերված փորձն իրականում տալիս է Կասայիցի միջնագծի որոշման առավել դյուրին, պատկերավոր և օբյեկտիվ միջոցը: Մասնավորապես, այդ նպատակով նկարում հինգ գագաթներն անվանված են հարևան երկրների միջազգային անվանատառային հապավումներով: Օրինակ, AZ/RF գագաթն իրականում հանդիսանում է Կասայիցի ափ ելնող ԱՀ-ի և ՌԴ-ի միջև պետական սահմանակետը: Եվ այն աներկբա նշում է, որ Կասայիցի միջնագծային բաժանման դեպքում անհնարին է, որ Իրանը Կասայիցից բաժանվի ուղիղ գծով: Ինչպես դա ջանում է անել Ադրբեջանը՝ հիմնվելով 1970թ. աղավաղված քարտեզի վրա: Այստեղ նա «սեփական» հատվածը որոշում է՝ ելնելով միջնագծային սահմանազատման տրամաբանությունից, սակայն Իրանի համար ուժի մեջ է թողնում Աստարա – Հասան Կուլի 1935թ. գիծը (տե՛ս Նկար 23.2): Հասկանալի է, որ այսպիսի մոտեցումը հակասում է ոչ միայն միջազգային իրավունքի նորմերին, այլև պարզ տրամաբանությանը, բնական օրենքներին և

²⁸ Նվազագույն մակերևույթների և օճառաթաղանթների այս զարմանահրաշ վարքն արդի երկրաչափությունն ուսումնասիրում է այսպես կոչված Պլատոյի (*J. Plateau*) խնդրի շրջանակներում, որին հղում կկատարենք լրացուցիչ մանրամասների համար. *Задача Плато: Мыльные пленки и минимальные поверхности*, М., Мир, 1983. Հավելենք, որ օճառաթաղանթով այս ոչ բարդ փորձն անհրաժեշտ է կատարել ամենայն զգուշությամբ՝ զերծ մնալով ավելորդ ցնցումներից:

անգամ մաթեմատիկային: Այսպիսով, եթե մի պահ ընդունենք Կասպիցի միջնագծային սահմանազատման տրամաբանությունը, ապա «իրանական հատվածն» անհրաժեշտաբար կսահմանվի Շտեյնեյրի Ch 3 կետով և այդ կետը Աստարային ու Հասան Կուլիին միացնող գծերով (տե՛ս Նկար 23.4):

Հյուսիսային Կասպիցի սահմանազատումը «Դարի գործարքից» հետո

1994թ. գործարքը և 1990-ականների սկզբին Ադրբեջանի գործելակերպը հիմք դրեցին Կասպիցի ավազանում ներկայում ընթացող պայթյունավտանգ գործընթացներին, Հյուսիսային Կասպիցի սահմանազատման միակողմանի ու տենդագին եռուզեռին: Ի հակադրություն Կասպիցի կարգավիճակը սահմանող միջազգայնորեն վավեր պայմանագրերի հիմնարար դրույթների (տե՛ս վերը): Այսպես, 1998–2003թթ. ընթացքում Ղազախստանի, Ադրբեջանի և ՌԴ-ի միջև կնքվեցին Հյուսիսային Կասպիցի սահմանազատմանը նվիրված մի շարք պայմանագրեր, հիմնված «ջուրն ընդհանուր է, հատակը բաժանում ենք միջնագծով» սկզբունքի վրա [18, 19]: Ընդ որում, 1998թ. ռուս-ղազախական պայմանագրում ներմուծվում է «մոդիֆիկացված միջնագիծ» հասկացությունը, այն է՝ երկրաչափական միջնագծից համապատասխան պայմանավորվածություններով սահմանված տարբերվող գիծ: Մինչդեռ ադրբեջանա-ղազախական պայմանագիրը շարունակում է հենվել երկրաչափական միջնագծի հասկացության վրա: Ընդ որում, միջնագծի այս կամ այն մոդիֆիկացիաները նախադեպ ստեղծեցին անգամ միջազգային նորմերը խախտող այս մոտեցման էլ ավելի վիճարկելի տրամաբանության հաստատմանը [18]:


Միջնագծի տարատեսակ մոդիֆիկացիաներն արվում են՝ այս կամ այն ավեզրյա պետության հավակնություններից ու աշխարհաքաղաքական քաջից ելնելով և հնարավորինս հեռու են մեկ ընդհանուր սկզբունքի վրա հիմնվելուց ու կոնսենսուսային տրամաբանության կիրառումից: Հետևաբար, խնդիրը դառնում է հասանելի Կասպիցի ավազանից շատ հեռու գոյացած արտաքին ներազդեցություններին: Ուստի, զարմանալի չէ, որ Կասպիցի միջնագծային սահմանազատման ջերմեռանդ կողմնակիցն է ոչ միայն Ադրբեջանը, այլև Թուրքիան, ԵՄ-ը, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը և Իսրայելը: Դե, իսկ այս հարցում ՌԴ երկակի ու ոչ հստակ դիրքորոշումը միայն սաստկացնում է վիճակը:

Նշենք, որ Իրանը հետևողականորեն մերժում էր Կասպիցի միջնագծային սահմանազատման որևէ տարբերակ՝ ընդգծելով նրա միջազգայնորեն ճանաչված կարգավիճակից բխող հիմնարար դրույթները. Կասպիցը փակ է ավեզրյա 5 պետություններից անդին, Կասպիցի ջրավազանը և հատակը պատկանում են բոլոր հինգ ավեզրյա պետություններին, իսկ միակողմանի տնտեսական գործունեությունը պետք է սահմանվի միայն 10-12 մղոնանոց ազգային ավեզրյա գոտիներով: Դրանցից դուրս, ընդհանուր և տրանսկասպիական նախագծերն ու գործունեությունը պետք է իրականանան միայն ավեզրյա 5 պետությունների ընդհանուր կոնսենսուսի պարագայում:

Հետաքրքրական է, որ վերջին տարիներին այս մոտեցմանն է ավելի ու ավելի մոտենում ՌԴ-ն: Եթե «*лихие*» 90-ականների ընթացքում այն թերացավ Կասպիցի սահմանազատման խնդրում դրսևորել վճռականություն, սկզբունքայնություն և միջազգային իրավունքի նորմերի հարգում, ապա ավելի ուշ, և հատկապես 2008-ից հետո, երբ այստեղ ավելի հստակ ընկալեցին Հարավային Կովկասում ու Կասպիցի ավազանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների վտանգը, կարծես թե փոխվեց նաև ՌԴ մոտեցումը:

Բոլոր դեպքում, նշենք հետևյալը: Հենվելով վերը նկարագրված Շտեյնեյրի կետերի մոտեցման վրա և օգտվելով Կասպից ծովի ավազանի բաց աղբյուրներում հասանելի առավել ճշգրիտ քարտեզից՝ կազմված ԱՄՆ Տեխասի համալսարանում, կառուցվել է Կասպիցի իրական, շտկված միջնագիծը: Արդյունքները ներկայացված են Նկար 23.5-ում, ուր կարմիր ընդհատ գծով պատկերված է Հարավային Կասպիցի շտկված միջնագիծը: Համեմատության համար նույն

նկարում պատկերված է նաև Ադրբեջանի կողմից առաջարկվող միջնագիծը²⁹ (սպիտակ ընդհատ գիծ): Նկարում նշվում են Ազերի-Չիրազ-Գյունեշլի (ԱՉԳ), Սերդար/Քյափազ և Արազ-Ալով-Շարգ (ԱԱՇ) դաշտերը, ինչպես նաև Աստարա - Հասան Կուլի գիծը (սև ընդհատ ուղիղ գիծ): Ինչպես տեսնում ենք նկարից, ճշգրտված միջնագիծն անցնում է ԱՉԳ դաշտի Ազերի հատվածով և հստակ ցույց է տալիս այս դաշտի հանդեպ Թուրքմենստանի պահանջների հիմնավորվածությունը: Նկատենք նաև, որ ճշգրտված միջնագիծն անցնում է Սերդար/Քյափազ դաշտից արևմուտք: Հետևաբար, այն ամբողջությամբ գտնվում է Հարավային Կասպիցի «Թուրքմենական հատվածում»: Ինչ վերաբերում է Կասպիցի «Իրանի հատվածին», ապա ճշգրտված միջնագծի Շտեյների 3-րդ կետը հստակ գտնվում է նախկին կետից հյուսիս: Այն ցույց է տալիս Աստարան Հասան Կուլիի հետ միացնող թևերը և ուրվագծում է Կասպիցի «իրանական հատվածը»: Ինչպես տեսնում ենք, դրա արևմտյան թևն անցնում է ԱԱՇ վրայով: Ինչը վկայում է այս դաշտը միակողմանիորեն զավթել ցանկացող Ադրբեջանի մոտեցման ողջ սնանկությունը:



Նկար 23.5. Հարավային Կասպիցը: Սահմանազատման ադրբեջանական գիծը (սպիտակ ընդհատ գիծ) ամբողջությամբ ներառում է ԱՉԳ և ԱԱՇ նավթադաշտերը և անցնում է Սերդար/Քյափազ դաշտով: Շտկված միջնագիծը (կարմիր ընդհատ գիծ) անցնում է ԱՉԳ նավթադաշտի Արևմտյան Ազերի հատվածով և թուրքմենական հատվածում ամբողջությամբ ներառում է Սերդար/Քյափազ դաշտը: Այն անցնում է նաև ԱԱՇ դաշտով:

Ինչ ավստս, որ մերձկասպյան երկրները հինգն են և ոչ վեցը: Այլապես, թե՛ գրաֆերի տեսությունը (Շտեյների կետերի բացակայությունը, տե՛ս Նկար 23.4c), թե՛ խոհեմությունը հավանաբար կհուշեին, որ Կասպիցի միջնագծային սահմանազատումը պատանդ է դարձնում ողջ տարածաշրջանն ազգային մրցակցության, միջազգային կորպորացիաների գիշատիչ ազանության և տարածաշրջանից հեռու գոյացած աշխարհաքաղաքական տարատեսակ ճնշումների ձեռքում: Շտեյների կետերի բացակայությունն այս դեպքում, թերևս, կհուշեր նաև, որ եթե ավեզրյա պետությունների իշխանությունները մտահոգ են իրենց ժողովուրդների

²⁹ Որը, ինչպես նշել էինք, ԽՍՀՄ նավթագազային արդյունաբերության 1970թ. աղավաղված քարտեզի գիծն է:

բարեկեցությամբ և տարածաշրջանում կայունության, համագործակցության ու զարգացման հաստատումով, ապա Կասպիցի ողջ ջրավազանում ու դրա հատակին չեն կարող լինել պետական սահմաններ: 10 կամ 12 մղոնանոց ազգային գոտիներն այս խրթին խնդրի միակ ճշմարիտ և արդարացի լուծումն են³⁰: Իսկ տնտեսական գործունեությունը, այդ թվում և նավթագազային տրանսկասպյան ծրագրերը, անհրաժեշտ է իրականացնել Կասպիցի ափեզրյա բոլոր երկրների և միայն դրանց պարտադիր կոնսենսուսային որոշումների հիման վրա:

Ավարտելով Կասպիցի սահմանագատման խնդրի մեր քննությունը՝ օգտվենք հարցին նվիրված ռուսական վերլուծական կայքում հրատարակված հայտնի մի նյութից [7], ուր ծավալուն վերլուծություններից հետո ձևակերպված են մի շարք եզրակացություններ: Լինելով ինքնին համարժեք՝ դրանք լավագույնս ի մի են բերում նաև մեր վերը շարադրված նյութը և հնարավորություն են ընձեռում հեղինակին խուսափել կողմնակալության մեջ հնարավոր մեղադրանքներից: Եվ այսպես:

«Անցած 2 տասնամյակների ընթացքում Կասպիցի սահմանագատման գործընթացներից կարելի է անել հետևյալ երեք եզրակացությունները.

1. Կասպիցի նկատմամբ ցանկացած որոշում միջազգային իրավական ուժ կստանա, եթե այն հենվում է Կասպից ծովի 5 լիտորալ երկրների կոնսենսուսային որոշման վրա: Անցած տասնամյակների ընթացքում չի հաջողվել ընդունել և ոչ մի այդպիսի որոշում, գործունեության և ոչ մի տիրույթի համար՝ ածխաջրածինների կամ ձկնային պաշարների յուրացում, նավարկում, բնապահպանություն, կենսաբազմազանության պահպանում, ստորջրյա ենթակառուցվածքի զարգացում: Ակնհայտ է, որ Կասպիցի իրավական կարգավիճակն է, որ պիտի սահմանի Կասպիցում տնտեսական գործունեության իրականացման իրավական հիմունքները, այլ ոչ հակառակը: Կասպիցի իրավական կարգավիճակի արհամարհման պայմաններում իրականացված Կասպիցի տարածքա-ռեսուրսային սահմանագատումը տարբեր սուբյեկտների միջև նպաստում է տարածաշրջանում լարվածության աճին:
2. Ներկայում Կասպից ծովի իրավական կարգավիճակը՝ սահմանված ԽՍՀՄ-ի և Իրանի միջև կնքված պայմանագրերով, շարունակում է գործել միջազգային իրավունքի բոլոր նորմերի համաձայն: Դրանք մինչև օրս չեն ենթարկվել դեմոնստրացիայի, և, հետևաբար, բոլոր խոսակցությունները Կասպիցի իրավական կարգավիճակի «անորոշ» լինելու մասին անհեթեթ են ու սնանկ: Այլ խոսքերով, միջազգային իրավունքի տեսանկյունից այն շարունակում է փակ լինել 3-րդ կողմերի համար, իսկ ջրավազանում 10 մղոնանոց ափեզրյա գոտիներից բացի, Կասպիցում գոյություն չունի միջազգայնորեն ճանաչված որևէ սահման: Իսկ պաշարների միակողմանի արդյունահանումը 10 մղոնանոց գոտուց անդին միջազգային իրավունքի տեսանկյունից լեգիտիմ չէ:
3. Անցած տասնամյակներում ՌԴ կասպիական դիվանագիտությունը թերացավ լուծել որևէ ռազմավարական նշանակության խնդիր ու հանգեցրեց միայն պարզ տեղաշարժերի: Այսպես ՌԴ, Թուրքմենստանի և Իրանի դիմակայումը Ադրբեջանին և Ղազախստանին պարզապես փոխակերպվեց ՌԴ, Ղազախստանի և Ադրբեջանի դիմակայմանն Իրանին և Թուրքմենստանին: ՌԴ դիվանագիտությունն³¹ այդպես էլ թերացավ ընկալել, որ Կասպիցի ռեսուրսա-տարածքային սահմանագատման գործընթացը, որ մեկնարկել է Արևմուտքի և ԱՄՆ ջանքերով, առաջին հերթին ուղղված է Ռուսաստանի դեմ» [7]:

Այլ խոսքերով, Հյուսիսային Կասպիցի միջնագծային սահմանագատման փուլը ՌԴ-ի, Ղազախստանի և Ադրբեջանի միջև ավարտված է: Այն թերացավ լուծել Կասպիցի ավազանում ծառայած որևէ կարևոր խնդիր՝ վիճակն այստեղ պայթյունավտանգ թողնելով: Ադրբեջանի համար ավարտվում է նաև ԱԶԳ նավթադաշտի զավթման դարաշրջանը, մեծ նավթի


³⁰ Ի վերջո, հենց դա է նշանակում 6 գագաթների դեպքում Շտեյնների կետերի բացակայությունը, եթե այս արդյունքը թարգմանենք քարտեզագրության և աշխարհաքաղաքականության լեզվով:

³¹ Նկատենք միայն, որ [7] աշխատության հեղինակի միանգամայն տեղին այս հանդիմանանքն առաջին հերթին պետք է ուղղվեր ոչ թե ՌԴ դիվանագիտությանը, այլ ՌԴ կառավարությանը (տե՛ս վերը):

դարաշրջանը: Այժմ օրակարգում են տրանսկասպյան գազային ծրագրերը, Արագ-Ալով-Շարգի գավթումը և Հարավային Կասպիցի սահմանագատումը: Հետևաբար, նաև՝ Իրանի մեկուսացումը (տե՛ս Գ. 2):

Հարավկասպիական վերջնախաղ. Կասպիցի սահմանագատումը և մենք

Հարց կարող է առջանալ. ինչո՞ւ և ինչո՞վ է այս ամենը էական մեզ համար: Պատասխանն առաջին հերթին հետևյալն է: Որովհետև Հյուսիսային Կասպիցի միջնագծային սահմանագատումը 90-ականների սկզբին հանգեցրեց Ադրբեջանի կողմից ԱԶԳ դաշտի



Նկար 23.6. Կասպիցի սահմանագատումն ըստ [21]-ի:

գավթմանը: Դա այս երկրում ռևանշիստական տրամադրությունների ուժգնացման նպաստավոր պայմաններ ստեղծեց, հանգեցրեց երկրի ռազմականացմանը, համատարած հայատյացության պետական քարոզմանը, և այսօր սպառնում է ողջ տարածաշրջանի կայունությանը:

Պատասխանի հաջորդ մասը կարելի է գտնել հայտնի լոբբիստ, ՀՖ կազմակերպության առաջատար վերլուծաբան Ա.Քոենի (Ariel Cohen) 2002թ. աշխատությունում [21], ԱՄՆ Կոնգրեսի արտաքին գործերի հանձնաժողովի առջև 2012թ. դեկտեմբերի 5-ի [22] և 2013թ. մայիսի վերջին Բաքվում կազմակերպված «Հայացք ապագային» ամերիկա-ադրբեջանական ֆորումի ժամանակ ունեցած նրա ելույթներում [23]: Դրանց էությունը կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

- Իսրայելն իր նավթի 40%-ը և գազի կեսից ավելին ստանում է Ադրբեջանից: ԱՄՆ-ի, Թուրքիայի և ՆԱՏՕ-ի համար առաջնահերթ խնդիր է ներգրավված լինել Ադրբեջանի էներգետիկ ծրագրերում և պնդել Կասպիցի միջնագծային սահմանագատումը, դրանում 3-րդ կողմերի ներգրավվածությունը:
- Իրանը պետք է մեկուսացվի և կազմաքանդվի:
- Հայաստանը տարածաշրջանում պետք է մնա մեկուսացված ու անընդհատ ճնշումների տակ լինի՝ կանխելու համար Իրանի հետ համագործակցությունը և էներգատրանսպորտային

- ենթակառուցվածքները խաթարելու փորձերը:
- Եվ քանի որ ավարտին են մոտենում ԱԶԳ արդյունաբերական ծավալներով արդյունահանման համար հում նավթի պաշարները (տե՛ս Գ. 2), ապա այժմ ողջ ուշադրությունն անհրաժեշտ է կենտրոնացնել տրանսկասպյան գազային ծրագրերի, հետևաբար նաև Հարավային Կասպիցի միջնագծային սահմանագատման խնդրի վրա:

Որպեսզի ավելի ցայտուն պատկերացնենք, թե ինչպես է պատկերացնում Կասպիցի սահմանազատումը Ա.Քոենը և ինչ է խորհուրդ տալիս այս հարցով ԱՄՆ Կոնգրեսին, Նկար 23.6-ում ([21] աշխատությունից) արտապատկերում ենք Կասպիցի սահմանազատման Քոենի քարտեզը: Մուգ կապույտով այստեղ նշված են վիճարկվող ԱԱՇ և Սերդար/Քյափազ դաշտերը: Ուշադրություն դարձնենք, որ «միջնագծային սեկտորալ բաժանում» (*sectoral division based on median line*) վերտառությունն ունեցող սև գիծը Քոենը ներկայացնում է որպես նոր մոտեցում: Ի հակադրություն կարմիր ընդհատ գծի, որը հեղինակն անվանում է «հին սեկտորալ բաժանում» (*old sectoral division*, կարմիր *պունկտիր*): Թե ինչ նկատի ունի Քոենը հին ու նոր ասելով՝ դժվար է ասել: Սակայն բավական է հայացք ձգել Նկար 23.2-ին, որպեսզի պարզ դառնա, որ Քոենն այստեղ ԽՍՀՄ Նավթագազային արդյունաբերության նախարարության 1970թ. աղավաղված քարտեզի միջնագիծը ներկայացնում է որպես «նոր մոտեցում»: Այս պրիմիտիվ զեղծարարությունը, թերևս, անցնելով ԱՄՆ որոշ կոնգրեսականների մոտ, որոնք, ամենայն հավանականությամբ, անգամ չեն էլ լսել ժամանակին ամենահզոր ԽՍՀՄ *Нефтьгазпром*-ի մասին:

Բայց մեզ՝ Ադրբեջանի տարածաշրջանային հարևաններին, այն ոչ մի դեպքում զոհացնել չի կարող: Առավել ևս, որ ակնհայտ է, թե ինչ է ուզում ասել Քոենն այս քարտեզով, և ինչ է ասել 2012-ին Վաշինգտոնում [22] և 2013-ին Բաքվում [23]. «Մոռացեք Իրանի պահանջների մասին, դրանց Աստարա - Հասան Կուլի գիծն էլ է բավարար: ԱԶԳ-ն և ԱԱՇ-ն Ադրբեջանին են, և վերջ: Դե, իսկ Սերդար/Քյափազով էլ Թուրքմենստանին կներգրավենք մեր տրանսկասպյան գազային ծրագրերի մեջ»:

Իսկ թե ինչպես կարող է ընթանալ Հարավային Կասպիցի միջնագծային այսպիսի սահմանազատումը, ցուց է տալիս ԱՄՆ բանակի (*US Army*) գլխավոր շատրի ուսումնական հնագույն կենտրոնի (*Fort Leavenworth*) քոլեջներից մեկում մշակված «Վրաստան-Ադրբեջան-Հայաստան-Թուրքիա» (*GAAT*, ՎԱՀԹ) շտաբային համակարգչային վարժանքը: Այս մասին առիթ ունեցել ենք գրելու [24, 25], ուստի այստեղ սահմանափակվենք միայն *GAAT* վարժանքի հակիրճ նկարագրությամբ:

Ի՞նչ է ՎԱՀԹ-ը (*GAAT*)

«Վրաստան-Ադրբեջան-Հայաստան-Թուրքիա»-ն (ՎԱՀԹ, *GAAT*) համակարգչային սցենարային խաղ է՝ նախատեսված ԱՄՆ բանակի շտաբային և բանակային ավագ հրամկազմի համալիր վարժանքի համար: Բաց մամուլում դրա մասին առաջին անգամ հիշատակվել է 2010թ. մարտի 25-ին ԱՄՆ բանակի պաշտոնական կայքում [26]: 2012թ. օգոստոսին հրապարակվեց Եվրոպայում ԱՄՆ բանակի հրամանատար, գեներալ Մ.Հերթլինգի (*Mark Hertling*) հոդված-հաշվետվությունը՝ հատուկ նվիրված ՎԱՀԹ սցենարային վարժանքներին [27]: Հայրենական հրապարակումներում ՎԱՀԹ-ին նվիրված ամբողջական նյութը բացակայում է³²: Սույն աշխատանքն այս բացը լրացնելու փորձ է, ուր, հենվելով 2012-13թթ. ուսումնական տարվա ՎԱՀԹ ձեռնարկի նյութերի վրա, բերվում է ՎԱՀԹ հակիրճ նկարագիրը: Ավելի հանգամանալի հարցը ներկայացված է [25]-ում:

Սցենարի հիմքում ընկած է ԱՄՆ զինուժի Եվրոպական հրամանատարության (*USEUCOM*) մոտ 100 հազարանոց կորպուսի միակողմանի (*unilateral*) հնգափուլ գործողությունը, որի ռազմավարական նպատակն է «ԱՄՆ և իր դաշնակիցների համար պահպանել Կասպիցի ածխաջրածինների պաշարների հասանելիությունը»³³: Գործողության առաքելությունն է (*mission*) պաշտպանել Ադրբեջանն Իրանից՝ ապահովելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը: Հիմնական հակառակորդն Իրանն է, որը «թեև համաձայնել է կասեցնել ուրանի հարստացման ծրագիրը, բայց շարունակում է ջանալ

³² Առկա է միայն *Panarmenian* գործակալության տեղեկատվական բնույթի 2012թ. օգոստոսի 21-ի կարճ հաղորդագրությունը [28]:

³³ Այս ձևակերպումը հիմք է տալիս դիտարկել ՎՀԱԹ-ը որպես «Ալիև-Շևարդնադզե-Էրբաքան-Նեթանյահու դոկտրինի» ռազմական բաղադրիչ: Այն ակտիվորեն քննարկվում էր 1996-ից՝ ԱՄՆ Հետախուզության ազգային տնօրենի *Tier* հատուկ ծրագրի ներքո [11]:

տարածաշրջանում գերիշխող դիրք զբաղեցնել» [29]: Սցենարային դեպքերը ծավալվում են 2017-19 թվականներին: Գործողության իրականացման քաղաքական նախապայմաններն են.

ա) Վրաստանի համաձայնությունը՝ տրամադրել նավահանգստներ, երկաթուղի, ավիաբազաներ և ճանապարհներ ԱՄՆ զինուժի շարժի համար: Համարվում է ՎԱՀԹ իրականացման հիմնական նախապայմանը;

բ) Ռուսաստանի համաձայնությունը գործողության իրականացման համար, որը ստացվել է երկու պայմանով: Առաջին՝ Աբխազիայում և Հր. Օսիայում տեղակայված ռուսական զինուժի *de facto* ճանաչում³⁴: Երկրորդ՝ աջակցում ադրբեջանական գազի և նավթի տրանզիտին ՌԴ տարածքով³⁵;

գ) Հայաստանի համաձայնությունը՝ ազդել ԼՂՀ իշխանությունների վրա մարտական գործողություններ չսկսելու ուղղությամբ;

դ) Թուրքիայի, Վրաստանի և Իրաքի համաձայնությունը՝ օդուժի համար բացել երկինքը և, ցանկալի է, հենակայաններ տրամադրել;

ե) Թուրքիայի համաձայնությունը՝ բացել Բոսֆորն ու Դարդանելը ԱՄՆ ծովային ռազմուժի շարժի համար:

USEUCOM գործողության պատասխանատվության տարածքն է՝ Ադրբեջան, Հայաստան, Թուրքիա, Վրաստան, Իրան, Սև ծովի Վրաստանի ափերը, Միջերկրական ծովի արևելյան հատված՝ բացի Կիպրոսից: Բացի վերջինից, գործողության օպերացիոն տարածքը չի ներառում նաև ԼՂՀ-ում հաստատված ՄԱԿ Խաղաղապահների սեկտորը (այս մասին՝ ստորև):

Որտե՞ղ, ե՞րբ և ինչպե՞ս են ծավալվում դեպքերը



ՎԱՀԹ սցենարի հիմնական կողմերն են. Ադրբեջան՝ նավթի և գազի հարուստ պաշարներով վտանգված դաշնակից երկիր, ԲԹՁ նավթամուղի ակունքը: «Ախուրստան»՝ Էթնիկ ազերիներով բնակեցված Իրանից անջատված նահանգ, հնարովի երկիր, որը հավակնում է Ադրբեջանի (Կասպիցի) նավթային հարստությանը և աջակցում է *SAPP*-ին և *SAPA*-ին (տե՛ս ստորև): «Լուրիստան»՝ Իրանից անջատված հարավարևմտյան նահանգ, հնարովի երկիր: Հայաստան՝ Ադրբեջանի հարևան երկիր, որը գրավել է Լեռնային Ղարաբաղը և Ադրբեջանի հարակից տարածքները: Աբխազիա և Հր. Օսիա³⁶. Վրաստանից անջատված *de facto* անկախ շրջաններ՝ ճանաչված միայն ՌԴ-ի, Նիկարագուայի, Վենեսուելայի և Նաուրուի կողմից: Հր. Օսիան ցանկանում է միանալ իր հյուսիսային հարևանին: Լեռնային Ղարաբաղ՝ Ադրբեջանի տարածքում գտնվող, Հայաստանի ու Ադրբեջանի կողմից վիճարկվող տարածք՝ գրավված Հայաստանի կողմից: Բնակչության 95%-ը՝ հայեր: Այստեղից 250 հազ. փախստական գտնվում է Ախուրստանում և 750 հազ. ներքին տեղահանվածներ՝ Ադրբեջանում: Գործում է ԵԱՀԿ-ի կողմից վերահսկվող հրադադարը (մեջբերում ենք ըստ ՎԱՀԹ ձեռնարկի):

Սցենարում գործող այլ ուժերից են. Հարավագերիական ժողովրդական կուսակցությունը (*SAPP*), որն ստեղծվել է 2015-ին ադրբեջանա-իրանական բաժանված ընտանիքների ու կլանների կողմից: Կուսակցության քաղաքական անհաջողությունները 2016-ին հանգեցրին կուսակցության ռազմական թևի առաջացմանը՝ Հարավագերիական ազգային բանակ (*SAPA*):

³⁴ Այդպես է բնագրում՝ ոչ թե Աբխազիայի և Հր. Օսիայի *de facto* ճանաչում, այլ այստեղ տեղակայված ռուսական զինուժի *de facto* ճանաչում: «Միննույն ժամանակ, կողմերը հասկանում են, որ այս տարածքներից դուրս նշված զինուժի որևէ շարժը կհանգեցնի լուրջ հետևանքների» [29]:

³⁵ Սցենարով ՌԴ նախապայմաններում բացակայում է ԼՂՀ, ինչպես նաև Հայաստանում տեղակայված ՌԴ զինուժի մասին որևէ հիշատակում:

³⁶ Հատկանշական է ՎՀԱԹ-ում Աջարիայի բացակայությունը: Հավանաբար, կազմակերպիչների պատկերացումներով այն ամբողջությամբ գտնվում է Թուրքիայի և Վրաստանի վերահսկման ներքո և «մտահոգությունների» տեղիք չի տալիս:



Նկար 23.7. Որտե՞ղ և ե՞րբ են ծավալվելու դեպքերը: ՎԱՀԾ թիվ 1 մարտական շրջանը (վերևում), փախստականների ճամբարները՝ տեղակայված թիվ 2 մարտական շրջանում (ներքևում): Աղբյուրը՝ [31]:

SAPA անդամները՝ ազերի ֆունդամենտալիստները, իրենց նույնացնում են Հյուսիսային Իրանում բնակվող ազերիների հետ: Ի սկզբանե վարժվել են Իրանի կողմից, ներկայումս

(2016թ.)՝ աջակցվում են Ախուրստանի կողմից: Ազատ Ղարաբաղի շարժում (*FKM*)՝ Լեռնային Ղարաբաղի ազերի փախստականների հենքի վրա գոյացած ապստամբ խումբ: Նպատակն է վերադարձնել Ղարաբաղը: Հայաստանը մեղադրում է Ադրբեջանին *FKM*-ին գաղտնի օժանդակելու համար: Մարտական գործողություններն իրականացվում են 6 մարտական շրջաններում (Նկար 23.7):

ՎԱՀԹ Ժամանակագրությունը.

2017թ. «Նախանձելով նավթային հարստություն դիզած Ադրբեջանի հյուսիսային հատվածին՝ երկրի աղքատ, հարավային հատվածն օրեցօր դառնում է ավելի արմատական ու հավակնոտ: *SAPA*-ն ռազմական գործողություններ է սկսում Քուր գետի հովտում: Միննույն ժամանակ, *FKM* գրոհայինները հակահայկական հարվածներ են իրականացնում Ադղամ ք. մոտակայքից: ԱՄՆ-ը ուժգնացնում է անվտանգության և տնտեսական ուղորտներում իր համագործակցությունն Ադրբեջանի և Վրաստանի հետ: ԱՄՆ-ը, ՌԴ-ն, Չինաստանը և ԵՄ-ը համոզում են Իրանին ընդունել ուրանի հարստացման ծրագրի կասեցումը և հասու դարձնել միջուկային ծրագիրը ԱԷՄԳ մշտադիտարկման համար: Իրանի կառավարությունը սկսում է կորցնել վերահսկողությունն իր հյուսիսարևմտյան (Ախուրստան) և հարավարևմտյան (Լուրիստան՝ բնակեցված բախտիյարներով և լուրերով) հատվածների վրա»³⁷:

2018թ. «Հայաստանում ծագումով Լեռնային Ղարաբաղից նախագահ Ս.Սարգսյանը երրորդ անգամ վերընտրվում է իր պաշտոնում: Ադրբեջանում նախագահ Ի.Ալիևն ավարտում է իր 3-րդ ժամկետը և լքում պաշտոնը: Այն զբաղեցնում է վարչապետ Ա.Ռասիզադեն, որը ձեռնամուխ է լինում դեմոկրատական ռեֆորմների իրականացմանը³⁸: Հուլիսին գրանցվում է *SAPA* առաջին գրոհն Ադրբեջանի ռազմուժի վրա: Իրանի հյուսիսարևմտյան շրջաններում աճում է լարվածությունը: Այստեղ շարունակվում է *SAPA* ջոկատների վարժանքը, որոնք հատելով սահմանը՝ հարվածներ են հասցնում Ադրբեջանին: Պատասխանելով Ադրբեջանի իշխանությունների խնդրանքին՝ Թուրքիան Բաքու է տեղափոխում *F-16* կործանիչների էսկադրան՝ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության համար: Պատասխանելով Ադրբեջանի իշխանությունների խնդրանքին՝ ԱՄՆ-ը սկսում է իր էքսպեդիցիոն կորպուսի գործողությունն Ադրբեջանի (և Վրաստանի) ռազմուժի հետ համատեղ (հենակայանը՝ Բաքու): ԵՄ-ը Վրաստանին և Ադրբեջանին ցուցաբերում է լրացուցիչ տնտեսական աջակցություն: Իրանի տարածքում ձևավորվում է Ախուրստանի Ինքնավար Հանրապետությունը: Միննույն ժամանակ, Իրանի հարավարևմտյանում ձևավորվում է Լուրիստանի Ինքնավար Հանրապետությունը» [30]:



2019թ. «փետրվարին Ախուրստանը և Լուրիստանը հայտարարում են իրենց լիակատար անկախության մասին (տե՛ս լուսամուտում, աղբյուրը [30]): Ախուրստանն ակտիվորեն սատարում է *SAPA* ուժերին և հայտնում Ադրբեջանի տարածքի նկատմամբ իր հավակնությունները: Հուլիսին Կասպից ծովում Ախուրստանի ռազմածովային ուժերը բախվում են Ադրբեջանի և

³⁷ Նկատենք, որ ըստ սցենարի, միջուկային ծրագրի շուրջ կոմպրոմիսը չի փրկում Իրանը մասնատումից:
³⁸ Այստեղ չգիտես ինչի վրա զարմանաս՝ սցենարի այլասերված տրամաբանության, թե՛ դրա ցինիզմի վրա:

Թուրքիայի նավթարդյունահանող նավերին: Հոկտեմբերին գրանցվում են Ախուրատանի ոչ կանոնավոր հարձակումներն Ադրբեջանի տարածք՝ ի օժանդակություն SAPA ուժերին: FKM գրոհայինները հարձակվում են Մեծամորի ԱԷԿ-ի վրա: Հարևան երկրները հայտարարում են ռադիոակտիվության արտահոսքի մասին: Հայաստանը մեղադրում է Ադրբեջանին այս հարձակմանն աջակցելու մեջ: Ռուսաստանը հիմնականում զբաղված է իր ներքին խնդիրներով (անջատողական շարժում Թաթարստանում)³⁹, թեև պահպանում է սահմանափակ զինուժ Աբխազիայում և Հր.Օսիայում»:

Ինչո՞ւ ՎԱՀԹ-ը պետք է իրականում կոչվեր «Կազմաքանդել Իրանը»

Նախ՝ այն բանի համար, որ ԼՂՀ-ում պատերազմի վերսկսումը ՎԱՀԹ-ը դիտարկում է որպես իրանական սադրանք: Ինչն, ի դեպ, հակասում է ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրեն Ջ.Քլեյմերի 2013թ. գնահատականին, թե ԼՂՀ-ում ռազմական գործողությունները կարող են վերսկսվել Բաքվի թյուր հաշվարկների ու իրադրության սխալ ընկալման հետևանքով [32]: Դե, իսկ ՎԱՀԹ գործողության իրականացումը 2018-ին հանգեցնում է Իրանի մասնատմանը 2019-ին (տե՛ս վերը): Իրանին չի փրկում նաև իր միջուկային ծրագրերի հարցում արտաքին ճնշումներին ենթարկվելը [31]: Ըստ ՎԱՀԹ-ի, Իրանի մասնատումը, մեկ է, վրա է հասնում՝ հին հունական ողբերգությունների անողոք ճակատագրի նման:

Ինչո՞ւ է այն մտահոգիչ մեզ համար և ինչո՞ւ՝ հետաքրքիր

Մեզ համար այն մտահոգիչ է նրանով, որ ՎԱՀԹ գործողության 4-րդ փուլում ԼՂՀ և հարակից տարածքներում, ինչպես նաև ադրբեջանա-իրանական սահմանի երկայնքով, նախատեսվում է ստեղծել հատուկ գոտիներ (*exclusion zones*), որոնք «պետք է հանձնվեն ՄԱԿ կամ ՆԱՏՕ խաղաղապահ ուժերին և/կամ Ադրբեջանի պաշտպանական ուժերին՝ անվտանգության երաշխավորման համար» ([29], *Objectiv 16, Effect 16-1*): Հաշվի առնելով այն, որ ըստ ՎԱՀԹ-ի՝ 2018-ից տարածքում նախատեսված է թուրքական զինուժի ներկայությունը, դժվար չէ պատկերացնել այս «խաղաղապահ ուժերի» բնույթն ու այս ամենի հետևանքները մեզ համար (տե՛ս Նկար 3.7):

Սցենարը դիտարկում է 2019-ին Ադրբեջանի էթնոկլանային տրոհման հնարավորությունը: ՎԱՀԹ ծավալուն ձեռնարկը պարունակում է այս հարցին նվիրված նույնիսկ առանձին նյութ՝ «Հատուկ հետախուզական հաշվետվություն թիվ 101200, մարտ, 2019թ.»: Ըստ դրա, ԼՂՀ մի մասը 2019-ին գտնվելու է Խոջալուի և Բիլաշուվարի կլանների վերահսկման տակ (տե՛ս Նկար 3.8): Հատկանշական է Ադրբեջանում լեզգիական և թալիշական (Թիվ 5 մարտական շրջան) ազգային տարածքների առկայությունը: Չխորանալով բերված պատկերի հավանականության ու ժամանակագրության գնահատման խորթին հարցերում՝, փաստենք միայն, որ Ադրբեջանի էթնոկլանային տրոհումը ՎԱՀԹ-ը համարում է ոչ միայն հնարավոր, այլև հավանական:


Ինչո՞ւ է այն անիրատեսական

Նախ՝ այն բանի համար, որ իր առջև ունենալով Իրաքի և Լիբիայի օրինակները՝ Իրանն ամենևին էլ չի ցանկանա մասնատվել՝ ոչ 2019-ին, ոչ առհասարակ: Ինչն ապացուցում է այսօր՝ Սիրիայում ծավալվող գործընթացների առնչությամբ: Ընդհանրապես, պատերազմը Սիրիայում անհրաժեշտ է դիտարկել որպես ՎԱՀԹ սցենարի նախերգանք:


Այնուհետև, ՎԱՀԹ-ը իր հիմնական դրվագներով ակնհայտորեն գրված էր Մ.Սաակաշվիլու իշխանության օրոք: Այսօր Վրաստանում ծավալվող գործընթացներն այլ իրողություն են վկայում: Ճիշտ է, դժվար է կանխատեսել, թե ինչպես կզարգանան գործընթացներն այս դյուրաթեք երկրում, օրինակ՝ Սոչիի ձմեռային օլիմպիադայից հետո: Բայց, բոլոր դեպքերում, վերադարձը Շևարդնաձե-Սաակաշվիլու աշխարհաքաղաքականությանը այստեղ քիչ հավանական է:

³⁹ Ինչը, պետք է ենթադրել, 2014-ին Աֆղանստանից Արևմտյան կոալիցիայի բանակի դուրսբերման և այստեղից Միջին Ասիայով դեպի Թաթարստան մահմեդական ֆունդամենտալիստների ինֆիլտրացիայի հետևանք է:

Այնուհետև, դժվար է պատկերացնել պուտինյան ՌԴ այսչափ պասիվ կեցվածքը Հարավային Կովկասում, ինչպես այն նկարագրված է ՎԱՀԹ-ում: Եվ նորից, դժվար է կանխատեսել, թե ինչքանով կուժեղանան ՌԴ-ում սեպարատիզմն ու արմատական իսլամը՝ Աֆղանստանից արևմտյան գորքերի դուրսբերումից հետո: Մակայն դժվար է պատկերացնել նաև, որ Հարավային Կովկասում ու Կասպիցում իր վարքով 2018-19թթ. ՌԴ-ն նորից կհիշեցնի 90-ականների սկզբի ապակոդմնորոշված և անդեմ, ամորֆ Ռուսաստանը: Բոլոր դեպքերում, Հայաստանում ՌԴ ռազմական հենակայանի առկայությունը և ընդունված որոշումները, ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական համագործակցության մակարդակը, ՀՀ հավասարակշիռ արտաքին քաղաքականությունը, ՌԴ հստակ դիրքորոշումը Սիրիայի հարցում և այլ հանգամանքներ ՎԱՀԹ-ում նկարագրված դեպքերի ընթացքը դարձնում են քիչ հավանական:



Clans/Ethnic & Political Groups



Նկար 23.8 Ադրբեջանի կլանաէթնիկ տրոհումն ըստ ՎԱՀԹ-ի: Աղբյուրը՝ [31]

Վերջապես, ամենայն հավանականությամբ, ՎԱՀԹ-ը գրվում էր դեռ այն տարիներին, երբ Միջերկրականում, Կիպրոսից հարավ և Իսրայելի ավեզրյա հատվածում չէին հայտնաբերվել գազի շոշափելի պաշարներ: Այսօր դրանք իրողություն են: 2013-ին գազի առաջին, դեռ ոչ մեծ ծավալներն արդեն մուտք գործեցին երկիր (հիմնական մատակարարումները կսկսվեն 2016-ից): Իսրայելի կառավարությունը վերջերս նույնիսկ որոշում կայացրեց արտահանել Միջերկրականի իր գազի արդյունահանված ծավալների 40%-ը: Այս ամենը հիմնովին փոխում է ոչ միայն Իսրայելի վառելիքաէներգետիկ հաշվեկշիռը, այլև էական նշանակություն կարող է ունենալ տարածաշրջանային մի շարք գործընթացներում Իսրայելի ներգրավվածության վրա: Մասնավորապես, բացառված չէ, որ կթուլանա նրա ներգրավվածությունը Կասպիցի շուրջ ծավալվող գործընթացներում:

Իսկ ամենակարևորը հետևյալն է: ԼՂՀ քաղաքացիներն իրացրել են իրենց *ինքնորոշման* իրավունքը և այսօր ձեռնամուխ են իրենց ազատ ու ժողովրդավար հայրենիքի կերտման գործին: Ու սա, թերևս, լավագույնս կհասկանան առաջին հերթին ԱՄՆ քաղաքացիները, որոնք ժամանակին իրացրին *իրենց* ինքնորոշման իրավունքը:

Աղբյուրներ և գրականություն

1. Документы внешней политики СССР. Т. III, М., 1959.
2. Документы внешней политики СССР. Т. X. М., 1965.
3. Документы внешней политики СССР. Т. XIX, М., 1968.
4. Федоров, Ю.Е., Правовой статус Каспийского моря. М.: Исследование ЦМИ МГИМО. - М., 1996.
5. Барсегов, Ю.Г., Каспий в международном праве и мировой политике М.: ИМЭМО РАН, 1998.
6. Кислякова, Н., Правовой режим Каспийского моря как обоснование права собственности на углеводородные ресурсы⁴⁰.
7. Бутаев, А.М., Каспий: Статус, Нефть, Уровень. 2000⁴¹.
8. Мамедов, Р.Ф., Международно-правовая делимитация Каспийского моря. Баку. 2001.
9. Кепбанов Е., Правовой статус Каспийского моря и региональная безопасность. МЖМП. 2005. № 1.
10. Венская Конвенция о праве преемстве государств в отношении международных договоров 1978 г. Ст. 34⁴².
11. Марджанян А., Энергетическое будущее Южного Кавказа: Электроэнергетика. М. *Caucasica*, vol. 1, 2011г., с. 317-337.
12. Sagers J. M., 'The Oil Industry in the Southern-Tier Former Soviet republics', *Post-Soviet Geography* 35, No 5, 1994.
13. Klebnikov Paul, 'The Quietly Determined American', *Forbes*, October 24, 1994.
14. Barylski, V. R., Russia, the West and the Caspian Energy Hub. *Middle East Journal* 49, No 2, 1995.
15. Гейдар Алиев открывает миру Азербайджан. Изд. "Азербайджан", 1994.
16. *The Economist*, September 24, 1994.
17. Մարջանյան Ա., Էներգետիկա և աշխարհաքաղաքականություն, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (1), 2003թ., էջ 13-55⁴³:
18. Соглашение о разграничении дна северной части Каспийского моря в целях осуществления суверенных прав на недропользование между РФ и Республикой Казахстан, 1998 г. Протокол к российско-казахстанскому Соглашению 1998 года, о модифицированной срединной линии, 2002г. российско-азербайджанское Соглашение о разграничении сопредельных участков дна Каспийского моря между РФ и Республикой Азербайджан. Трехстороннее Соглашение между Республикой Азербайджан, Республикой Казахстан и РФ о точке стыка линии разграничения сопредельных участков дна Каспийского моря, 2003г.
19. Серикова, А., Международно-правовые аспекты разграничения Каспия и добрососедство прикаспийских государств. Добрососедство МНП, 6.06.2010⁴⁴.

⁴⁰ <http://www.oilrussia.ru/pravovoy-rezhim-kaspiyskogo-morya-kak-obosnovanie-prava-sobstvennosti-na-uglevodorodnie-resursi>

⁴¹ <http://caspiy.net>

⁴² <http://www.lawmix.ru/abro.php?id=11515>

⁴³ http://www.noravank.am/upload/pdf/240_am.pdf

20. *Алиев, И.*, Каспийская нефть Азербайджана. М.: Известия, 2003.
21. *Cohen, A.*, Iran's Claims Over Caspian Sea Resources Threaten Energy Security. The Heritage Foundation. No. 1582, September 4, 2002.
22. *Cohen, A.*, Testimony before the Subcommittee on Europe and Eurasia, Committee on Foreign Affairs, U.S. House of Representatives. Washington DC, December 5, 2012.⁴⁵
23. *Козн, А.*, "Взгляд в будущее" – подтверждение геополитических возможностей Азербайджана. Trend, 29 мая 2013.
24. *Марджанян, А.*, Военные Игры и Не только. 05.06.2013. Versia.am⁴⁶.
25. *Марджанян А.*, Война и Мир (2018 года). НОФ "Нораванк", XXI-й Век, 2013г.
26. *King, W.*, Exercise blends joint, interagency, international elements. March 25, 2010⁴⁷.
27. Gen. Hertling's trip report: Security and conflict in the Caucasus region, not frozen. *Foreign Policy*, August 20, 2012.
28. ԱՄՆ բանակի ղեկավարությունը մշակել է մի շարք ռազմական սցենարներ «անվտանգ» Կովկասի համար. *Panarmenian*, 21 օգոստոսի 2012:
29. GAAT Scenario Reference Book 1, Part 6., USEUCOM CONPLAN 4567 – 18 (U). STUTTGART, GERMANY. 28 February 2018.⁴⁸
30. GAAT Scenario, Study Guide #1. Present – DEC 2019. Ref. C210. Fort Leavenworth, Version: AY 12-13⁴⁹.
31. GAAT Scenario Reference Book 1, Part 4. Special Intelligence Report 101200MAR2019⁵⁰.
32. Worldwide Threat Assessment of the US Intelligence Community. Senate Select Committee on Intelligence. James R. Clapper, Director of National Intelligence.

⁴⁴ <http://www.dobrososedstvo.org/dobrososedstvo-mezhdu-stranami-i-narodami-2010/mezhdunarodno-pravovye-aspekty-razgranicheniya-kaspiya-i-dobrososedstvo-prikaspijskix-gosudarstv.html>

⁴⁵ <http://www.heritage.org/research/testimony/2012/12/iran-threatens-us-interests-in-the-south-caucasus>

⁴⁶ <http://www.versia.am/ara-mardzhanyan-voennye-igry-i-ne-tolko/>

⁴⁷ <http://www.army.mil/article/36325/exercise-blends-joint-interagency-international-elements/>

⁴⁸ https://blackboard.leavenworth.army.mil/master_library/Scenario_References/AY2012-2013/SRB1/SRB1_Pt6.pdf

⁴⁹ https://blackboard.leavenworth.army.mil/master_library/Scenario_References/AY2012-2013/SRB1/SRB1_Pt1.pdf


⁵⁰ https://blackboard.leavenworth.army.mil/master_library/Scenario_References/AY2012-2013/SRB1/SRB1_Pt4.pdf

Ազերի-Չիրագ-Գյունեշլի նավթադաշտի արդյունահանման ծրագրերը

1994թ. սեպտեմբերին այսպես կոչված «Դարի գործարքի» շրջանակներում ԱՀ կառավարության և AIOC ընկերության միջև 30 տարի ժամկետով ստորագրվեց ԱԶԳ-ն շահագործելու վերաբերյալ Արդյունքի բաշխման համաձայնագիրը (ԱԲՀ): BP ընկերությունն⁵¹ իր 34.1% բաժնետոմսերի մասով հանդիսացավ AIOC ընկերության օպերատորը և համապատասխան կոնսորցիումի ղեկավարը:

ԱԶԳ շահագործման «վաղ նավթի» փուլը մեկնարկեց 1997թ. նոյեմբերին՝ «Չիրագ դաշտի վաղ նավթ» ծրագրի շրջանակներում (*Chirag Early Oil Project, EOP*): Այդ ժամանակ տեղակայվեց և շահագործման հանձնվեց 24 հատվածանի (*production slots*) Չիրագ-1 պլատֆորմը: EOP ծրագրի շրջանակներում Չիրագ-1 պլատֆորմի միջին օրական արտադրողականությունը կազմեց օրական 130 հազ. բարել: Արդյունահանված նավթը մղվում էր Արևմտյան նավթատար խողովակաշարով (*Western Route Export Pipeline*) դեպի Սուփսա (Վրաստան):

2004 թվականից, երբ ակնհայտ դարձավ ԱԶԳ-ն կազմող բոլոր նավթադաշտերի միացյալ բնույթը, մեկնարկեց ԱԶԳ շահագործման՝ AIOC ընկերության կողմից մշակված համալիր եռափուլ ծրագիրը: Նկար 4.1-ում պատկերվում են այս ծրագրի առանձին փուլերում տեղակայված պլատֆորմները: Ամբողջականության համար այստեղ պատկերված է նաև նախնական՝ EOP ծրագրի շրջանակներում տեղակայված Չիրագ-1 (*Chirag*) պլատֆորմը:




Աղբյուրը՝ Azeri, Chirag, Gunashli Full Field Development Produced Water Disposal Project. Environmental and Socio-economic Impact Assessment. Final Report, AIOC/BP. January 2007.

ԱԶԳ նավթադաշտի «վաղ նավթի» փուլ. Չիրագ (*Chirag*) պլատֆորմ

Ափերյա հորատման և նավթի արդյունահանման պլատֆորմ՝ տեղակայված Բաքվից 120 կմ արևելք, Կասպից ծովում: Շահագործման է հանձնվել 1997թ.՝ ապահովելով ԱԶԳ դաշտից,

⁵¹ Այդ ժամանակ BP/Amoco-ն:

այսպես կոչված, «վաղ նավթի» (*early oil*) արդյունահանումը: Արդյունահանված նավթը հասցվում է Սանգաչալի տերմինալ 176 կմ երկարությամբ և 24 դյույմ տրամաչափի խողովակաշարով: Բացի այդ, այս պլատֆորմից դեպի «Նավթայի քարեր» հարթակը գցված են 48 կմ երկարությամբ և 16 դյույմ տրամաչափի գազատար խողովակաշար և 12 կմ երկարությամբ և



Նկար 24.2. ԱԶԳ նավթադաշտի «վաղ նավթի» փուլի «Չիրագ» պլատֆորմ և նրա պլանավորվող և իրական արդյունահանումը

18 դյույմ տրամաչափի գազատար խողովակաշար դեպի Կենտրոնական Ազերի (*Central Azeri*) հարթակ: Նավթադաշտի ներքին ճնշումը պահպանելու համար իրականացվում է դեպի դաշտ ջրի հետմղում:

Համաձայն Գլոբալ էներգետիկ հետազոտությունների կենտրոնի (ԳԷՀԿ) 2010թ. մարտին հրապարակված տվյալների, Չիրագ-1 պլատֆորմից արդյունահանված նավթի ցուցանիշները գերազանցեցին *EOP* ծրագրով նախատեսվածներին (Նկար 24.2): Այսպես, ծրագրով նախատեսվում էր, որ այս պլատֆորմից արտադրանքն իր պիկային օրական ցուցանիշին՝ 130 հազ. բարելին կհասնի 2002թ. և կպահպանի այն մինչև 2006թ. (բաց կարմիր մակերես): Իրականում, 2005թ. միջին օրական արտադրանքը կազմեց 150 հազ. բարել, այնուհետև սկսեց նվազել՝ մնալով, սակայն, պլանավորվածից բարձր: 2010թ. այն կազմեց 91 հազ. բարել՝ նախատեսված օրական 75 հազ. բարելի փոխարեն (մուգ կարմիր կոր):

ԱԶԳ նավթադաշտի Համալիր ծրագրի առաջին փուլ. Կենտրոնական Ազերի (*Central Azeri*) ինտեգրացված պլատֆորմ

Ափերյա հորատման, նավթի և գազի արդյունահանման, գազի և ջրի հետմղման ինտեգրացված 48 հատվածանի ինտեգրացված պլատֆորմ⁵² տեղակայված Բաքվից մոտ 100 կմ արևելք-հարավ-արևելք՝ Կասպից ծովում: Ջրի խորությունը հարթակի տակ՝ 128 մ: Նախատեսված արտադրողականությունը՝ 420 հազ. բ/օր: Համաձայն *J. Ray McDermott* ընկերության տվյալների, այս ինտեգրացված պլատֆորմի առավելագույն արտադրողականությունը շահագործման ժամանակահատվածում կազմել է 340 հազ. բ/օր: Արդյունահանված նավթը մղվում է Սանգաչալի տերմինալ մոտ 120 կմ երկարությամբ և 30 դյույմ տրամաչափի խողովակաշարով: Պլատֆորմը շահագործման է հանձնվել 2005թ. փետրվարին:

Ինտեգրացված պլատֆորմը բաղկացած է երկու մասից, որոնք համակցված են կամրջակով: Առաջին հատվածը ներկայացնում է հորատման և արդյունահանման հատվածը, հերթափոխ անձնակազմի բնակելի մասով (*PDQ*, Նկար 24.3-ում՝ առաջին պլան, աջից): Երկրորդ հատվածը ներկայացնում է կոմպրեսորային կայանք (*C&WP*, ԿԿ, Նկարում՝ ձախից),

⁵² ԱԶԳ նավթադաշտի Համալիր ծրագրի շրջանակներում բոլոր ինտեգրացված և պարզ պլատֆորմներն արտադրվել են *J. Ray McDermott* ընկերության մասնաճյուղը հանդիսացող *McDermott Caspian Contractors Inc* ընկերության կողմից:

որը նախատեսված է ԱԶԳ Կենտրոնական, Արևելյան և Արևմտյան պլատֆորմներում (տե՛ս Նկար 24.1) իրականացվող դեպի նավթադաշտ ջրի և գազի հետմղման, նավթի արդյունահանման ընթացքում ստացված հարակից գազի՝ դեպի Սանգաչալի տերմինալ մղման, ինչպես նաև սեփական կարիքները բավարարելու նպատակով էլեկտրաէներգիայի արտադրության համար (Կենտրոնական Ագերի պլատֆորմի ԿԿ հատվածում տեղակայված են *Rolls Royce* ընկերության 10 գազատուրբիններ: Նկար 24.3-ում՝ պլատֆորմի ԿԿ հատվածը տեսանելի է հետին պլանում՝ ձախից): 2008թ. սեպտեմբերի 17-ի վթարի պահին Կենտրոնական Ագերի պլատֆորմի այս «էլեկտրակայանը» ստորջրյա մալուխով սնում էր նաև Արևմտյան Ագերի պլատֆորմը: Սեփական գեներատորի մինչ այդ տեղի ունեցած վթարի պատճառով սա նշված պլատֆորմի միակ սնուցման աղբյուրն էր: Կենտրոնական Ագերի պլատֆորմի աշխատանքները կանգնեցնելուց հետո Արևմտյան Ագերին դադարեցրեց աշխատանքը:

Գազի հետմղման-արդյունահանման նախատեսված արտադրողականությունը՝ օրական 29 հազ. մ³՝ 5 հետմղման հորատանցքերով: Ջրի հետմղման նախատեսված արտադրողականությունը՝ օրական մեկ մլն բարել՝ 12 հետմղման հորատանցքերով: Համաձայն *BP* ընկերության, «Կենտրոնական Ագերի» ինտեգրացված պլատֆորմի ԿԿ հատվածում տեղակայված են ընկերության ամենահզոր ջրի և հարակից գազի հետմղման կոմպրեսորները⁵³: Հարակից գազի արդյունահանման նախատեսված արտադրողականությունը՝ օրական 7 մլն մ³: Պլատֆորմից հարակից գազը մղվում է Սանգաչալի տերմինալ 28 դյույմ տրամաչափի գազատարով: Ծրագրի իրականացման շրջանակներում Սանգաչալի տերմինալում կառուցվել է գազի մշակման ու մղման հատվածը: Ընդհանրապես, 2011թ. ԱԶԳ նավթարդյունահանման ընթացքում ստացվել է մոտ 34 մլն մ³ հարակից գազ օրական (մոտ երկու անգամ ավելի, քան Շահ Դենիզ-1 ծրագրի շրջանակներում): Սակայն այս ծավալի մոտ 75%-ը նորից հետ է մղվում դաշտ, նավթի արդյունահանման ճնշումն ապահովելու համար:

Համաձայն ԳԷՀԿ տեղեկությունների և Հավելված 1-ում բերվող ԱՀ-ում ԱՄՆ դեսպանության հաղորդագրությունների, 2008թ. սեպտեմբերի 17-ի վթարից հետո կանգնեցվեց ոչ միայն Կենտրոնական Ագերի պլատֆորմը, այլև Արևմտյան Ագերի և Արևելյան Ագերի պլատֆորմների աշխատանքը, քանի որ այս պլատֆորմներից արդյունահանվող նավթը և հարակից գազն ուղարկվում էին Կենտրոնական Ագերի պլատֆորմ՝ վերամշակման և դեպի



Նկար 24.3. Կենտ. Ագերի պլատֆորմի պլանավորվող և իրական (մուգ կանաչ) արդյունահանումը:

⁵³ <http://www.bp.com/sectiongenericarticle.do?categoryId=9006667&contentId=7015091>

Սանգաչայի տերմինալ մղման, ինչպես նաև հետ՝ դեպի դաշտ մղման համար (տե՛ս Նկար 24.1): Կենտրոնական Ազերի պլատֆորմի մասնակի շահագործումը վերսկսվեց միայն դեկտեմբերի կեսերին, իսկ վնասված հորատանցքի զննման և վերանորոգման աշխատանքներն ընթանում էին ողջ 2009թ.: Այդ տարի պլատֆորմի միջին արտադրողականությունը կազմեց ընդամենը 190 հազար բ/օր՝ պլանավորված 375 հազարի փոխարեն: Հենվելով ԳԷՀԿ տվյալների վրա՝ Նկար 24.3-ում ներկայացնում ենք Կենտրոնական Ազերի պլատֆորմից նավթի արդյունահանման պլանավորված (բաց կանաչ մակերես) և իրական (մուգ կանաչ կոր) ծավալների գրաֆիկը՝ օրական հազար բարել չափողականությամբ: Ինչպես տեսնում ենք այս գրաֆիկից, 2008-11թթ. ժամանակահատվածի համար նշված պլատֆորմի փաստացի արտադրողականությունը 150-200 բ/օր չափով ավելի քիչ էր պլանավորված ծավալներից:

Սակայն այս գրաֆիկի ամենաուշագրավ հանգամանքն այն է, որ ըստ ԳԷՀԿ տվյալների, Կենտրոնական Ազերի պլատֆորմի իրական արտադրողականությունը մոտ 60-65 հազ. բ/օր չափով (կամ մոտ 22%) զիջում էր պլանավորված ծավալներին ողջ 2007թ. ու 2008թ. մինչև սեպտեմբերյան աղետը ժամանակահատվածում: Եվ քանի որ բացակայում են 2007թ. ընթացքում Կենտրոնական Ազերի պլատֆորմի աշխատանքներում որևէ լուրջ վթարի մասին տեղեկությունները, ապա ստիպված ենք ենթադրել, որ այս թերակատարումն ուներ զուտ արտադրողական բնույթ՝ պայմանավորված, օրինակ, արդյունահանվող դաշտում նավթի անբավարար ներքին ճնշմամբ:

Այս ենթադրությունն առավել ևս հիմք ունի իրական լինել, քանի որ, ինչպես նշել էինք վերը, *BP* ընկերությունը 2006-08թթ. գտնվում էր ԱՀ իշխանությունների և պետական *SOCAR* ընկերության, ԱՄՆ իշխանական և կուսակցական օղակների և Վրաստանի (ու Թուրքիայի) կառավարությունների անընդհատ ճնշման տակ. պահանջվում էր սահմանափակել դեպի դաշտ հարակից գազի հետմղման ծավալները՝ օգտագործելով այն առաջին հերթին Վրաստանի (և Թուրքիայի) գազամատակարարման համար, հատկապես 2006թ. և 2007թ. ձմեռային սեզոններին: Արդյունքում՝ տեղի տալով այս ճնշումներին և սահմանափակելով հարակից գազի հետմղման ծավալները, դաշտում ներքին անբավարար ճնշման հետևանքով Կենտրոնական Ազերի պլատֆորմի արտադրողականությունն ընկել էր պլանավորված ցուցանիշներից ողջ 2007թ. և 2008թ. առաջին 10 ամիսներին: Մեր այս ենթադրությունը կողմնակիորեն հաստատվում է նաև Ադրբեյջանում ԱՄՆ դեսպանին հասցեագրված *BP* ընկերության այդ ժամանակվա ղեկավար Բ.Շրեդերի՝ 2008թ. հոկտեմբերի 8-ով թվագրված այս խոսքերով. «Վերջապես լիքը գազ կլինի Վրաստան ուղարկելու համար, քանի որ [Վրաստանին գազը ուղարկելու] այլընտրանքը կլինի կամ դրա պարզապես վառումը⁵⁴, **կամ նավթի արդյունահանման մակարդակի էլ ավելի իջեցումը**»⁵⁵: Այսպես, պարադոքսալ կերպով, 2008թ. սեպտեմբերյան աղետն «օգնեց» լուծել այդ ձմեռ Վրաստանին մատակարարվող գազի խնդիրը, քանի որ, միևնույն է, դադարեցվել էին դեպի դաշտ հարակից գազի հետմղման աշխատանքները ԱԶԳ դաշտի Ազերի հատվածի բոլոր երեք պլատֆորմներում:

Դժվար չէ հաշվարկել, որ 2007-11թթ. ժամանակահատվածի համար Կենտրոնական Ազերի պլատֆորմի պլանավորված ծավալներից «թերարտադրումը» կազմել էր մոտ 264.63 մլն բարել կամ օրական՝ միջինը 242 հազ. բարել: Ընդ որում, մինչև 2008թ. սեպտեմբերյան աղետը այս թերակատարումն արդեն կազմել էր օրական միջինը 60-65 հազ. բարել կամ մոտ 30 մլն բարել ողջ 2007թ.-2008թ. սեպտեմբեր ժամանակահատվածի համար: Ունենք բոլոր հիմքերը պնդելու, որ հենց այս 242 հազար բ/օր չարդյունահանված նավթն է այն իրական պատճառը, որն այդպես էլ թույլ չտվեց ԱԶԳ-ից նավթի արդյունահանումը հասցնել 2004-07թթ. *BP/AIOC* «ԱԶԳ շահագործման համալիր եռափուլ ծրագրով» նախատեսված 1.2 մլն բարել կամ ավելի ուշ վերանայված՝ 1.0 մլն բ/օր ցուցանիշին (տե՛ս Գ. 2, Նկար 2.4):

⁵⁴ *Flaring*. Շարակից գազը վառվում է պլատֆորմում տեղակայված հատուկ ջահերով, որոնք տեսանելի են Նկար 24.3-ում:

⁵⁵ Տե՛ս Հավելված 1, Թիվ 12, 3.с, ընդգծումը մերն է- *U.V.*:

ԱԶԳ նավթադաշտի Համալիր ծրագրի 2-րդ փուլ


Արևմտյան Ազերի (West Azeri) պլատֆորմ: ԱԶԳ նավթադաշտի Համալիր ծրագրի 2-րդ փուլում իրականացված 16 հազար տոննա զանգվածով երկու միօրինակ հորատման և արդյունահանման պլատֆորմների տեղակայումը ԱԶԳ դաշտի Ազերի հատվածի արևելյան և արևմտյան հատվածներում համապատասխանաբար տե՛ս Նկար 24.4-ում: Պլատֆորմների կառուցումը, տեղափոխումը և տեղակայումն իրականացվել են *McDermott Caspian Contractors Inc* ընկերության կողմից:

Ափեզրյա հորատման և նավթի արդյունահանման 48 հատվածանի «Արևմտյան Ազերի» պլատֆորմը տեղակայված է Բաքվից մոտ 100 կմ հեռավորության վրա՝ Կասպից ծովում (տե՛ս նկարում՝ առաջին պլանում): «Արևմտյան Ազերի» պլատֆորմի հարթակում ջրի խորությունը կազմում է 118 մ: Արդյունահանված նավթը հասցվում է Սանգաչալի տերմինալ 30 դյույմ տրամաչափի խողովակաշարով (2009-ից): Արդյունահանված հարակից գազը մղվում է Կենտրոնական Ազերի ինտեգրացված պլատֆորմ՝ մշակման, դեպի Սանգաչալի տերմինալ մղման, ինչպես նաև դեպի դաշտ հետմղման համար: Պլատֆորմը շահագործման է հանձնվել 2005թ. դեկտեմբերի վերջին՝ առաջին 3 հորատանցքերով:

Ակնկալվում էր, որ սկսած 2006թ. վերջից՝ պլատֆորմի արտադրողականությունը կկազմի 300 հազ. բ/օր:

Արևելյան Ազերի (East Azeri) պլատֆորմ: Ափեզրյա հորատման և նավթի արդյունահանման 48 հատվածանի պլատֆորմ՝ տեղակայված Բաքվից մոտ 100 կմ հեռավորության վրա, Կասպից ծովում: Պլատֆորմի հարթակում ջրի խորությունը կազմում է 150 մ: Արդյունահանված նավթը հասցվում է Սանգաչալի տերմինալ: Արդյունահանված հարակից գազը մղվում է Կենտրոնական Ազերի ինտեգրացված պլատֆորմ՝ մշակման, դեպի Սանգաչալի տերմինալ մղման, ինչպես նաև դեպի դաշտ հետմղման համար: Պլատֆորմը շահագործման է հանձնվել 2006թ. նոյեմբերին: 2007թ. պլատֆորմի միջին օրական արտադրողականությունը կազմում էր 260 հազ. բարել:

Հենվելով ԳԷՀԿ տվյալների վրա՝ Նկար 24.4-ում պատկերված է Արևմտյան և Արևելյան Ազերի պլատֆորմների համար պլանավորված (բաց մանուշակագույն մակերես) և իրական (մուգ մանուշակագույն կոր) նավթի արդյունահանման գրաֆիկը՝ օրական հազար բարել չափողականությամբ: Ինչպես տեսնում ենք, ԱԶԳ նավթադաշտի Համալիր ծրագրի 2-րդ փուլը հանդիսացող այս երկու պլատֆորմների արտադրողականությունը 2007թ. համապատասխանում էր պլանավորված ցուցանիշներին: Սակայն Կենտրոնական Ազերի ինտեգրացված պլատֆորմի 2008թ. սեպտեմբերյան աղետի հետևանքով արտադրողականությունն ընկնում է պլանավորված քանակից մոտ 100 հազ. բ/օր չափով:



Նկար 24.4. ԱԶԳ նավթադաշտի 2-րդ փուլի ծրագրի Արևմտյան Ազերի պլատֆորմ (հեռվում՝ Կենտրոնական Ազերի պլատֆորմը): 2-րդ փուլի (Արևմտյան և Արևելյան Ազերի պլատֆորմներ) պլանավորվող և իրական արդյունահանումը

Հաջորդ տարիներին այս պլատֆորմների արտադրողականությունը բարձրանում է և 2011թ. նույնիսկ գերազանցում պլանավորված ծավալները:


Ընդհանրապես ակնկալվում էր, որ ԱԶԳ նավթադաշտի Համալիր ծրագրի 2-րդ փուլի իրականացումով նավթադաշտից ընդհանուր արտադրողականությունը կհասցվի մինչև օրական 800 հազ. բարել նավթի:



Նկար 24.5. Խորջրյա Գյունեշլի ավեգրյա պլատֆորմ

ԱԶԳ նավթադաշտի Համալիր ծրագրի 3-րդ փուլ. Խորջրյա Գյունեշլի (Deepwater Gunashli) ինտեգրացված պլատֆորմ

